

11.209

ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ
ՆՈՐ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ՄԱՍԻՆ

ՊԵՅՐԱՏ ԵՄ ԴԱՋՄԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ—1933

3

Բ-55

17.203

3

01 MAR 2013

24 SEP 2006

P-55

1 DEC 2009

Գ. ԲԵՐԼԻՆ

ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ
ՆՈՐ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ՄԱՍԻՆ

361
38

818

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՐԻԱ
ՑԵՐԵԿԱՆ - 1933
ՀԱՅԿ - ՀԱՅԿԱՆ
ՀԱՅԿ - ՀԱՅԿԱՆ

Թարգմ. Գրաքիոս
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեմյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Պետկրատի տպարան, Գլավլիտ № 8086 (Բ),
Հրատ. № 2413, Պատվեր 601 Տիրաժ 1000
Փաթեմատ 72×105, 1 քեթրում 102-400 տպ. նշան

ՎՈՐՆ Ե ՆՈՐ ՄԵԹՈՂԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

I

Այս հարցին կարելի չէ կարճ պատասխանել
այսպես. կարմիր բանակայինների հետ մշակելով
այս կամ այն թեման, այս կամ այն հարցը,
սկզբում այդ հարցը պետք է բացատրել, սկզբում
հարկավոր է հաղորդել կարմիր բանակայինին այն
բոլորը, ինչ անհրաժեշտ է ըմբռնելու և չուրաց-
նելու համար այդ հարցը և միջանորանից հետո
պարտավորեցնել կարմիր բանակայինին ինք-
նուրույն վերջացնել այդ հարցի մշակումը դա-
սազրթով, և միայն դրանից հետո զրուցել կարմիր
բանակայինի հետ, հարցնել ու ստուգել նրան:

Սկզբում խմբակավարը պետք է մանրամաս-
նորեն, խելամտորեն ու հասկանալի ձևով մեկնա-
բանի ու բացատրի կարմիր բանակայինին տվյալ
թեմայի ամբողջ բովանդակությունը, բացատրի
այնպես, վոր կարմիր բանակայինը լիովին հաս-
կանա, թե խոսքն ինչի՝ մասին է, վոր թեմայի

բոլոր հարցերի մասին նա խմբակավարից ստանա մանրամասն պատասխան:

Նրանից հետո, յերբ խմբակավարը համոզվեց, վոր կարմիր բանակայինները հասկացել և յուրացրել են նրա բացատրութիւնը, նա կարող էր ալ կարմիր բանակայիններին մի փոքրիկ առաջադրութիւն՝ կարդալու համար և աշխատելու զաստիճանով, վորպէսզի նրանք ել ավելի ամուր յուրացնեն այն, ինչ նրանց արդեն պատմել է խմբակավարը:

Վերջապէս՝ խմբակավարը պետք է ստուգի, թե ի՞նչպէս են կարմիր բանակայինները յուրացրել ավանդիող թեման: Այստեղ հիմնական մեթոդը հանդիսանում է դարձյալ «հին բարեկամը», այն է՝ զրուցը, վոր տարվում է խիստ պլանով, կոնսրու հարցերով, վորոնք զտեղված են քաղաքապետներին ծրագրում: Ստուգելով՝ խմբակավարը պետք է միևնույն ժամանակ ուղղի այն, ինչ կարմիր բանակայինները սխալ են հասկացել և, յետե պետք է, տա լրացուցիչ բացատրութիւններ, լրացուցիչ նյութ:

Այսպիսով, նոր մեթոդի ելութիւնը հիմնականում բնորոշվում է հետևյալ յերեք հիմնական դրութիւնով:

Նախ՝ վոր կարևորն է նոր մեթոդում, խմբակավարի կողմից թեմայի սխտեմատիկ մեկնաբանումն է, սպառնիչ բացատրութիւնն է, խմբակա-

վարի կեդրանի խոսքն է այդ: Նոր մեթոդը հնից տարբերվում է ամենից առաջ նրանով, վոր նա պարտավորեցնում է խմբակավարին բացատրել, պատմել կարմիր բանակայինին այս կամ այն հարցի բովանդակութիւնը, նախ քան նրան առաջադրութիւն տալու: Նոր մեթոդը քաղաքապետներին կենտրոնումն է դնում խմբակավարի բացատրութիւնը, նրա կենդանի խոսքը: Այն բանից, թե վնդավ ճիշտ, խելամտորեն ու հասկանալի ձևով է պարզաբանում խմբակավարն ավանդիող թեման, ամբողջովին կախված է թեմայի մշակման հաջողութիւնը, կարմիր բանակայինների կողմից այդ թեմայի յուրացման արագութիւնն ու վորակը:

Յեկրորդ՝ վերացնելով «կենդանի զրուցը», վորպէս քաղաքապետներին հիմնական մեթոդ, նոր մեթոդը միանգամայն չի ժխտում զրուցի մեթոդը, հարց ու պատասխանների մեթոդը: Ընդհակառակն, խմբակավարի հարցերն ու կարմիր բանակայինների պատասխանները, ինչպէս նաև կարմիր բանակայինների հարցերն ու խմբակավարի կողմից այդ հարցերին տված պատասխանները, ալ կերպ ասած՝ խմբակավարի զրուցը կարմիր բանակայինների հետ—հանդիսանում է նոր մեթոդով անցնող քաղաքապետներին կարեւորա-

գույն մասը: Չի կարելի բացատրել, չհարցնելով ու չպատասխանելով հարցերին, չի կարելի ստուգել լուրացրածն այլ կերպ, քան զրույցի միջոցով: Բայց առաջ քաղ պարտավունքն ամբողջովին կառուցվում եր հարց ու պատասխանի հիման վրա, առաջ զրույցը հանդիսանում եր քաղ պարտավունքների ունիվերսալ ձևը: Իսկ այժմ զրույցը պետք է ծավալվի ամենից առաջ այն հիման վրա, վոր խմբակավորն ինքը, նախապես պատմելով, բացատրի կարմիր բանակալինին:

Յերրորդ՝ նոր մեթոդն այլ ձևով, քան թե առաջ, դնում ե կարմիր բանակալինի աշխատանքի հարցը դասագրքով, կարմիր բանակալինիների ինքնապատրաստության հարցը քաղ պարտավունքների համար: Առաջ կարմիր բանակալինն ինքնապատրաստության միջոցով պետք ե ստանար մի ամբողջ շարք նոր տեղեկություններ, վորոնց հիման վրա պետք ե ծավալվեր խմբակավորի զրույցը կարմիր բանակալինների հետ: Այժմ արդեն այլ ե ինքնաքնադատության խնդիրը: Թեմայի վերաբերյալ նոր նյութը կարմիր բանակալինը պետք ե ստանա անմիջորեն խմբակավորից:

Ինքնապատրաստության խնդիրն այն ե, վոր կարմիր բանակալինը, կարդալով դասագրքում այս կամ այն հոդվածն արդեն նրանից հետո,

յերբ այդ հոդվածը պարզաբանել ե նրան խմբակավորը, վերջնականապես մշակի, լուրացնի, ամուր տպավորի իր մեջ այն ամենը, ինչի մասին արդեն նախապես պատմված ե յեղել նրան:

II

Յերեման կարելի չե լսել այնպիսի կարծիք, թե քաղ պարտավունքների նոր մեթոդը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ այսպես կոչվող «կիսալաբորատոր մեթոդի» վերականգնմը, վոր յերկու-յերեք տարի առաջ գործադրվում եր գնդային դպրոցներում, և վորն անցյալ տարի վերացվեց:

Վոչ մի հիմք չկա այդպիսի կարծիքի համար: Եւ յիմնովին սխալ ե:

«Կիսալաբորատոր մեթոդի» հիմքն եր կարմիր բանակալինների, այսպես կոչվող, «ինքնուրույն աշխատանքը», վորը տեղի չեր առնենում անմիջորեն հենց քաղ պարտավունքների ժամանակ:

Խմբակավորը պարտավոր եր առաջ միայն այդ «ինքնուրույն աշխատանքի» համար վոչ մի բանի չպարտավորեցնող «ներածական խոսքը», և այդ աշխատանքն ավարտելուց հետո պետք ե հապճեպ կերպով (քանի վոր քաղ պարտավունքին համակցրած ժամանակի հիմնական մասը դնում եր այդ «ինքնուրույն աշխատանքին») ամփոփեր աշխատանքի արդյունքները:

Նոր մեթոդի հիմքն ամենևին կարմիր բանա-
կալիւնների «ինքնուրուշն աշխատանքը» չէ:
«Կիսալաբորատոր մեթոդի» միջոցին գործադրը
վող «ներածական խոսքը» վոչինչ ընդհանուր չունի
այն բանի հետ, ինչ ներկայումս պահանջվում է
խմբակավարից: Բացառել թեման ամենևին չի
նշանակում թեմայի առթիվ «ներածական խոսք»
ասել: Բացատրել թեման, նշանակում է լիովին
պարզաբանել թեմայի ելութունը և վաչ թե
թողնել, վոր կարմիր բանակալիւններն «իրենց
խելքով» հասնեն թեմայի ելությանն» ինքնու-
րուշն աշխատանքի» ընթացքում:

«Կիսալաբորատոր մեթոդի» հիմնական արտոն
այն էր, վոր այդ մեթոդով զգալիորեն իջնում էր
խմբակավարի դերը: Գործնականում՝ «Կիսալաբոր-
ատոր մեթոդի» ժամանակ կարմիր բանակալիւնը
քաղաքապետներին հատկացրած ժամանակի
մեծ մասը գտնվում էր խմբակավարի ղեկավա-
րութւնից դուրս, քանի վոր ժամանակի այդ մեծ
մասը նաեւ կացվում էր «ինքնուրուշն աշխատան-
քին», վոր փաստորեն անցնում էր առանց խմ-
բակավարի մասնակցության: Քաղաքապետնե-
րի՝ հիմնական ու ամենահուժեղ գեները,—
խմբակավարի կենդանի խոսքը, խմբակավարի
անձնական զրույցը կարմիր բանակալիւնների հետ,
«Կիսալաբորատոր մեթոդի ժամանակ համարյա

չէր ոգտագործվում, կամ ոգտագործվում էր
պարզապես վոչբավարար չափով: Յեւ հասկապես
այդ պահանջով վերացվեց կիսալաբորատոր
մեթոդը:

Նոր մեթոդի հիմնական առավելութւնն այն
է, վոր նա բարձրացնում է խմբակավարի դերը,
խմբակավարի կենդանի խոսքն իրոք դառնում
է քաղաքապետներին հիմնական գեներ:
Հասկապես հենց այդ պահանջով էլ մացված
է քաղաքապետներին նոր մեթոդը:

Նա, ով կշիռի քաղաքապետներին նոր
մեթոդը «Կիսալաբորատոր մեթոդի» հետ, ով
գործնականում կաշխատի վերականգնել «Կիսա-
լաբորատոր մեթոդի» անձաբակ յեղանակները, նա
ամենակողմից սխալ կգործի, վորը վոչ թե կբարձ-
րացնի, ու կիջեցնի քաղաքապետներին վո-
րակը:

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐ
ՄԵԹՈՂՈՎ

I

Թեմայի նոր մեթոդով մշակման կարգն ար-
դեն իսկ պարզ է նրանից, ինչ ասված է այդ
մեթոդի ելության մասին: Այդ կարգը բաղկա-
ցած է յերեք հիմնական ողակից.— 1 խմբակա-

վարի բացատրություն, 2. կարմիր բանակա-
յինների ինքնապատրաստություն դասագրքով ու
լրագրով յեւ 3. կրկնողական — սուգի գրույց:

Քաղաքապետներին ծրագրի համարյա յու-
րաքանչուր թեմա իրենից ներկայացնում է հար-
ցերի մի մեծ շրջան, վոր չի կարելի սպառել
1—2 պարագմունքում: Այսպես, որինակ՝ «Միջազ-
գային հեղափոխական շարժումն ու Կոմինտերնը»
թեմայի մեջ մտնում են հետևյալ հարցերը.

1. Դասակարգային պայքարը կապիտալիստական
աշխարհում: 2. Կոմինտերնը վորպես համաշխար-
հային հեղափոխութեան շտաբ: 3. Հեղափոխա-
կան վերելքը կապիտալի յերկրներում: 4. Ֆա-
շիզմն ու սոցիալ ֆաշիզմը: 5. Պայքարը բանվոր
դասակարգի մեծամասնութունը նվաճելու համար
6. Հեղափոխական շարժումը գաղութներում: 8
ԽՍՀՄ վորպես համաշխարհային պրոլետարիատի
հարվածային բրիգադ: 8. Կոմինտերնի պայքարը
պատերազմի ու ռազմական վտանգի դեմ:

Հասկանալի լե, վոր խմբակավարը մի պարագա-
մունքի ընթացքում չի կարող բացատրել այս
բոլոր հարցերը, կարմիր բանակայինն եւ միտն-
գամից չի կարող կարգաւ այն ամենը, ինչ գըր-
ված է դասագրքում այդ հարցի մասին:

Այս պատճառով, ամենից առաջ, վոր հարկավոր
է անել թեման նոր մեթոդով մշակելիս,

այդ այն է, վոր թեման պետք է բաժանել հա-
վածների, լենթաթեմաների տհնայիսի հաշվով, վոր
յուրաքանչուր լենթաթեմա պարունակի իր մեջ
վոչ ավելի քան այնքան հարց, վոր կարելի լե
ընդգրկել մի պարագմունքում (2 ժամում): Մի-
ջին հաշվով յուրաքանչուր լենթաթեմայում պետք
է լինի վոչ ավելի, քան 2—3 հիմնական հարց:

Սակայն դրա հետ միասին, թեմաների բաժա-
նումն ըստ լենթաթեմաների չպետք է կատարվի
մեքենայորեն, այլ հաշվի առնելով այդ հարցերի
բնույթն ու լսարանի պատրաստականութունը: Յերբ
վորեւ հարց կորիք ունի իր կարեւորութեամբ հա-
տուկ հանգամանորեն կատարած մշակման, հարկա-
վոր է այդ հարցն առանձնացնել վորպես առան-
ձին լենթաթեմա: Պատրաստված խմբակի հա-
մար լենթաթեմաների քանակը կարող է քիչ լի-
նել, քան թե սակավ պատրաստված խմբակի
համար:

Թեմաների մոտավոր բաժանումն ըստ լենթա-
թեմաների արված է հենց քաղաքապետներին
ծրագրում: Այսպես, որինակ՝ «Միջազգային հե-
ղափոխական շարժումն ու Կոմինտերնը» բաժան-
վում է հետևյալ լենթաթեմաների:

1. Հեղափոխական շարժումը կապիտալիս-
տական յերկրներում (վորի մեջ մտնում է յերկու
հիմնական հարց, 1. դասակարգային պայքարը

կապիտալիստական աշխարհում և 2) Կոմինտերնը վորպես համաշխարհային հեղափոխության շտաբ)։

2. Պայքարը բանվոր դասակարգի ու բուրժուազայի միջեւ ժամանակակից Երջանում. 1) հեղափոխական վերելքը կապիտալի լերկրներում և 2) Ֆաշիզմն ու սոցիալ-ֆաշիզմը։

3. Կոմունիստների խնդիրը կապիտալիստական լերկրներում (պայքարը բանվոր դասակարգի մեծամասնութունը նվաճելու համար)։

4. Հեղափոխական շարժումն ու կոմունիստների աշխատանքը գաղութներում։

5. ԽՍՀՄ համաշխարհին պրոլետարիատի հայրենիքն է (1. ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն է, 2. Կոմինտերնի պայքարը պատերազմի վտանգի դեմ)։

Նման բաժանումն ըստ լենինյան թեմաների կանխորոշում է ամբողջ թեմայի մշակման վողջ պլանը։ Հարկավոր է միայն հիշել, վոր լենինյան թեմաների առանձնացնումն ամենևին չի նշանակում փոխարինել մի մեծ թեմա՝ մի քանի փոքր թեմաներով։ Մշակելով չուրաքանչյուր լենինյան թեմա՝ խրմբակավորը պետք է շարունակ նկատի ունենա, վոր այդ լենինյան թեման միասնական թեմայի միայն մի մասն է և համապատասխան ձևով ել խմբավորի ամբողջ նույթը։ Մասնավորապես անհրաժեշտ է, վոր առաջին լենինյան թեմայի մշակու-

մից առաջ խմբակավորը մի ամփոփ ներածութուն տա ամբողջ թեմայի համար, ծանոթացնելով կարմիր բանակայիններին ամբողջ թեմայի պլանն անցնելու հետ, իսկ վերջին լենինյան թեման մեակելուց հետո ամփոփի թեման՝ ամբողջությամբ վերցրած։

II

Այսպիսով, նոր մեթոդով թեմայի մշակման կարգը ներկայացվում է հետևյալ կարգով (ցուց ենք տալիս «Միջազգային հեղափոխական շարժումն ու Կոմինտերնը» թեմայի մշակման նույն որինակով)։

Առաջին պարապմունք 1. խմբակավորը «Միջազգային հեղափոխական շարժումն ու Կոմինտերնը» թեմայի վերաբերյալ ամենաամփոփ ներածական խոսքով պատմում է, թե ինչ կապ ունի այդ թեման նախորդ թեմաների հետ, ինչպիսին կլինի թեմայի մշակման կարգը (քանի պարապմունք, քանի լենինյան թեմա և այլն), ինչ նյութի հիման վրա պետք է տանել ինքնապատրաստութունը (գասազրքի գույսը, թերթերից վերցրած նյութը), նշում է սոցմրցակցության հիմնական որեկաները, վերջում կարմիր բանակայինների հետ գրի լե առնում լենինյան թեմաների անունները։

2. Խմբակավորը մեկնաբանում է առաջին

յենթաթեմայի «Հեղափոխական շարժումը կապի-
տալիստական յերկրներում» բովանդակութիւնը,
միաժամանակ հարցեր տալով կարմիր բանակա-
լիներին, պատասխանելով նրանց հարցերին,
անհրաժեշտ զբաղեցումներ կատարելով և այլն:
Վերջապէս՝ առաջադրութիւնն է տալիս կարմիր
բանակալիներին այդ առաջին յենթաթեմայի
առթիւ ինքնապատրաստութիւն համար:

Պարապմունքից հետո՝ յերեկոյան ինքնապատ-
րաստութիւն ժամերին կարմիր բանակալիները
կարդում են առաջին յենթաթեմայի վերաբերյալ
համապատասխան նյութը դասագրքով, թերթերով,
կատարում են խմբակավարի տված առաջադրու-
թիւնը:

Յեկրորդ պարապմունք. 1. խմբակավարն ստու-
գում է. թե ի՞նչպէս են կարմիր բանակալիները
յուրացրել առաջին յենթաթեման և ի՞նչպէս են
այդ առթիւ կատարել առաջադրութիւնը, և ամ-
փոփ յեզրակացութիւնն է անում յենթաթեմայի
մեջ մտցված յուրաքանչյուր հիմնական հարցի
առթիւ:

2. խմբակավարը մեկնաբանում և բացատրում
է յեկրորդ յենթաթեմայի՝ «Բանվոր դասա-
կարգի ու բուրժուազիայի պայքարը ժամանա-
կակից շրջանում» բովանդակութիւնը և այդ

յենթաթեմայի վերաբերյալ առաջադրութիւնն և
տալիս ինքնապատրաստութիւն համար:

Պարապմունքից հետո, յերեկոյան տեղի յե-
ռնենում ինքնապատրաստութիւն՝ յեկրորդ թե-
մայի վերաբերյալ:

Յերրորդ, չորրորդ և հինգերորդ պարապմունք-
ներն անցնում են յեկրորդ պարապմունքի
նման:

Վեցերորդ պարապմունք. 1. խմբակավարն
ստուգում է հինգերորդ յենթաթեմայի, — «ԽՍՀՄ
համաշխարհային պրոլետարիատի հալընիքն
է», — յուրացումը:

2. խմբակավարն ընդհանուր յեզրակացութիւն
է անում «Միջազգային հեղափոխական շարժումն
ու Կոմինտերնը» ամբողջ թեմայի առթիւ, մի
անգամ ևս կանգ առնելով թեմայի ամենից
դժվարին հարցերի վրա և միաժամանակ ստու-
գում է, թե ի՞նչպէս են կարմիր բանակալիները
յուրացրել ամբողջ թեմայի հիմնական հարցերը:

Այսպիսով, 5 յենթաթեմայի բաժանված թեմայի
համար հարկավոր է ամենապակասը 6 պարապ-
մունք:

III

Վարժական պրոցեսի այս սխեման թելադր-
ված է քաղպարապմունքները նոր մեթոդով
անցնելու առաջին փորձերով: Հետագա փորձն

այդ սխեմայի մեջ կմտցնի մի շարք ուղղումներ: Սակայն արդեն իսկ այժմ պարզ է, վոր այդ սխեմայի վրա չի կարելի նայել վորպես շարունակ վրա:

Հնարավոր է, վորևե լենթաթեմայի պարզաբանման կամ ստուգիչ զրույց անցկացնելու համար, վոր հարցերի վորևե խմբից պահանջվի վոչ թե մի ժամ, ինչպես նախատեսված է սխեմայում, այլ մի ամբողջ քաղաքապետներ. հնարավոր ենույնպես, վոր վորևե լենթաթեմա պահանջի վոչ թե մեկ, այլ լերկու ինքնապատրաստութուն (լեթե այն նյութը, վոր պետք է մշակեն կարմիր բանակալիները, չափազանց մեծ է):

Առանձնապես կարևոր է նշել, վոր հիշատակված սխեման ամենից հաճախ կփոփոխվի ընթացիկ քաղականության թեմաների մշակման ժամանակ: Ընթացիկ քաղաքականության մի շարք թեմաներ կարելի կլինի մշակել պարզացրած սխեմայով՝ մի պարապմունքի ընթացքում: Այդ դեպքում խմբակավարը հենց բացատրելուց անմիջապես հետո կարմիր բանակալիների հետ անց է կացնում ստուգիչ — կրկնողական զրույց և հանձնարարում է նյութն ընթերցանության համար (մասսայական աշխատանքի կարգով, կարմիր բանակալիների կողմից թերթերի անհատական ընթերցում և այլն):

ԻՆՉՊԵՍ ԲԱՑԱՏՐԵԼ

I

Այստեղ արդեն քանիցս շեշտվեց, վոր քաղաքական պարապմունքի հաջողութունը կախված է ամենից առաջ նրանից, թե խմբակավարը վերջապի գրազետ, հասկանալի, համազիչ ձևով կկարողանա բացատրել կարմիր բանակալիներին մշակվող հարցը: Մինչդեռ նոր մեթոդիկայով քաղաքապետներին առաջին փորձը ազդարարում է այն մասին, վոր խմբակավարի բացատրութունն ուսուցման ամբողջ պրոցեսի ամենից թույլ ողակն է: Այդ ամենից առաջ բացատրված է խմբակավարի վոչ բավական պատրաստակա-
նությամբ, քանի վոր մեթոդական վոչ մի լեղանակ չի ոգնի խմբակավարին բացատրելու ամենից, ինչ ինքը չգիտե հաստատապես: Հարցը լավ բացատրելու համար հարկավոր է ամենից առաջ վոր խմբակավարը լավ իմանա այդ հարցը և այն ել իմանա զգալիորեն ավելի շատ, քան պետք է հաղորդի կարմիր բանակալիներին:

Այդ պատճառով, առաջին ու վճռական պայմանը, վորից կախված է խմբակավարի բացատրութունը, դա խմբակավարի բարեխիղճ, մեծամասն պատրաստությունն է փոխադրապատկերների համար:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Քանի վոր հաճախ

պատահում ե, վոր խմբակաւորութիւնը ե պատրաստ-
ված, բայց բացատրում ե անշաղի վատ, վոր
կարմիր բանակայինները կամ վոչինչ չեն հաս-
կանում, կամ ուղղակի քնում են քաղաքապ-
մունքներում:

Այդ արդեն հետեւանք ե ան բանի, վոր խմ-
բակավորը, զինելով իրեն անհրաժեշտ գիտելիք-
ներով, չի մտածել ադ գիտելիքները կարմիր
բանակայիններին փոխանցելու մեթոդիկայի մա-
սին: Ստորեւ բերած ամենապարզ խորհուրդները
կողմնին խելահաս խմբակավորին ձեռք բերելու
մի շարք մեթոդական սովորքներ, մշակելու իր
մեջ բացատրելու հմտութուն, պատմելու հըմ-
տութուն: Սակայն, կրնանք ենք, ադ ոգտակար
կլինի միայն այն դեպքում, յերբ խմբակավորը
պատրաստվի ըստ ելութեան այն հարցի վերաբե-
րյալ, վորը նա պետք ե պարզաբանի:

II

Ամենից առաջ, բացատրել—չի նշանակում
դասախոսութիւն կադալ: Այս դրութիւնը հար-
կավոր ե հաստատուպես յորացներ նոր մեթոդով
քաղաքապմունքներն անցկացնելու առաջին
փորձը ցույց ե տալիս, վոր «հարց ու պատաս-
խանի» մեթոդով պարագմունքն անցկացնելու
պարտականութիւնից ազատված խմբակավորն

ընկնում ե հակառակ ծալքահեղութեան մեջ ե
առանց շունչ քաշելու մի ժամվա, իսկ յերբեմն
նաեւ յերկու ժամվա զեկուցում ե կարդում թե-
մայի առթիւ:

Պարզ ե, վոր ադպիսի մի զեկուցում լսելը
կարմիր բանակայինի համար չափազանց դժվար
ե նա չի կարող հիշել ե մարսել միանգամից այն
ամենը, ինչի մասին խմբակավորը կարողացավ
պատմել մի ժամվա կամ ամբողջ քաղաքապ-
մունքի ընթացքում: Այդ պատճառով, խմբակա-
վորը հաստատուպես պետք ե հիշի հետեւալ կա-
նոնը. բացատրել առանձին-առանձին յուրաքան-
չյուր հարց յեվ չանցնել հաջորդ հարցի բացա-
սությանը, մինչեւ վոր համոզված չլինի, վոր
կարմիր բանակայինները հասկացել ու յուրացել
են նախորդ հարցը: Աշխատանքի կարգը պետք ե լինի
հետեւյալը. խմբակավորը բացատրում ե լենթա-
թեմայի հարցերից մեկը ե տեղն ու տեղը, նախ-
քան հաջորդ կետին անցնելը, կարմիր բանակային-
ներին 2—3 հարց ե տալիս, վորպեսզի իմանա,
թե հասկանալի չե՞ր արդյոք նրա բացատրութիւնը:
Յեթե վորեւե բան հասկանալի չե, կամ ախալ ե
հասկացված, խմբակավորը տալիս ե լրացուցիչ
բացատրութիւն, պատասխանում ե կարմիր բա-
նակայիններին հարցերին ե միայն դրանից հետո
յե անցնում հետեւյալի բացատրութեան: Վորչապի

ավելի ստեղծել և արտադրութեամբ լսարանը, անշափ ավելի հաճախ պետքէ կանգ առնել, անշափ ավելի հաճախ պետքէ ընդհատվի խմբակավորի խոսքը փոխեփոխ կարմիր բանակայինների հարցերով ու նրանց հարցերին տված պատասխաններով:

III

Այստեղից արդեն պարզ է, թե ինչպիսի նշանակութիւն են ստանում մեկնաբանման բացատրության մեջ հաջորդականութիւնը, պլանայնութիւնը, սխեմայն: Պետք է ամենավճռական ձևով հաղթահարվի այն, ինչ հաճախ կարելի չէ դիտել քաղաքապետներում՝ անսխեմայնութիւնը, ցրվածութիւնը բացատրութեան մեջ, մի հարցից մյուսին ցատկելը, կարմիր բանակայինների ուշադրութիւնը մի մտքի վրա կենտրոնացնել չկարողանալը, վորպեսզի դրանից հետո միայն անցնեն հաջորդ մտքի բացատրութեանը: Խմբակավորը պետք է հիշի, վոր նա իրավունք չունի պարապմունքի դալ առանց պարապմունքի՝ վաղորդ խորհած, զրի առած ստույգ պլանի (կոնսպեկտի):

Այդ պլանը պետք է իր մեջ պարունակի. 1, քաղաքապետներին հիմնական հարցերի ցուցակը և նրանց բացատրութեան հաջորդականութիւնը:

2. Իլլուստրատիվ նյութի ցուցակը (փաստեր, թվեր, ցիատաներ, առարկայական ձեռնարկներ):

3. Պարապմունքի ամբողջ բովանդակութիւնն ընդգրկող կոնարտ հարցերի ցուցակը:

4. Այն բոլորի ցուցակը՝ ինչ հարկավոր է զրի առնել կարմիր բանակայինների հետ, ճիշտ մատնանշելով, թե լերը և ինչպես անել դրանցումները:

5. Կարմիր բանակայինների ինքնուրույն աշխատանքի համար առաջադրութիւնների ցուցակը:

Խմբակավորին հրահանգող և նրա աշխատանքն ստուգող բոլոր անձանց պարտականութիւնն է սովորեցնել նրան կազմել պարապմունքների պլանները, ստուգել այդ պլանները, գնահատել նրանց, նշել նրանց բոլոր թերութիւնները, հետևել, վորպեսզի պլան կազմելը չլինի անախորժ պարտականութեան ձևական կատարում, այլ դործոն զենք լինի պայքարելու քաղաքապետներին վորակի համար:

IV

Պլանայնութեան լերաշխիքը հանդիսանում է այն, վոր խմբակավորը հմտորեն կարողանա լուրջ խորհել բացատրվող թեմայի ելութեան մասին, կարողանա քմբունել այդ թեմայի մեջ գլխավոր, գտնել կենսոնական հարցերը, վորպեսզի այնու-

հետեւ նրանց վրա բեմեռի կարմիր բանակա-
յինների ուսադուրքունը:

Վաչ աչն պարապմունքին, յերբ խմբակավորը
չի կարողացել ալդ անել, յերբ խմբակավորն
ուզում է մանրամասնորեն լուսաբանել ծրագրի
ու մեթոդական մշակման մեջ յեղած լուրաքան-
չուր կետ, յերբ նա չի կարողանում հաղթահարել
«համաստրեցումը» թեմայի բոլոր հարցերի պար-
զաբանման մեջ:

Ձեռնարկելով պարամունքների պլանի կազ-
մելը, խմբակավորը պետք է ամենից առաջ ծրա-
դրում յեղած հարցերի ամբողջ շրջանը բաժանի
յերկու խմբակի. 1) մի քանի (2-3) հիմնական
հարց, հիմնական միտք, վոր և տնհրաժեշտ է
բացատրել և 2) մնացած նյութը, վոր պետք
է դրվի ու լուսաբանվի՝ հիմնավորելու համար,
բացատրելու համար հիմնական հարցերը:

Վերցնենք, որինակ՝ քաղպարապմունքների ծրա-
գրի առաջին թեման «Կարմիր բանակի խնդիր-
ներն ու կազմակերպումը»: Նրա առաջին հատ-
վածի մեջ շատ նյութ է մտցված: Այդտեղ խոս-
վում է և՛ Կարմիր բանակի տարբերության մա-
սին՝ հանդեպ կապիտալիստական բանակների, և՛
«Կարմիր բանակի ծագման մասին, վորպես կա-
պիտալիստների ու կալվածատերերի իշխանու-
թյունը տապալած՝ Հոկտեմբերյան հեղափոխու-

թյան բանակի», և՛ «Կարմիր բանակի նշանակու-
թյան ու դերի մասին՝ քաղաքացիական պատե-
րագմի տարիներում ու տարերկրյա ու ուսումնական
կապիտալիստների դեմ մղած մարտերում, և՛ «վեր-
ջին տարիների որինակների մասին, վորոնք հաստա-
տում են Կարմիր բանակի խղճիւրների տարբերու-
թյունը՝ իմպերիալիստների բանակների հանդեպ»,
և՛ «Կարմիր բանակի կապի մասին աշխատավորների
հետ» և այլն: Յեթե խմբակավորը մտադրվի մանրա-
մասնորեն լուսաբանել այս բոլոր հարցերը, նա պար-
զապես ժամանակ չի ունենա մշակելու հենց միայն
այս յենթաթեման, հենց միայն մանրամասն բացա-
արելու համար, թե ինչպես աճեց Կարմիր բանակը,
և ինչպես կուվեց նա քաղաքացիական պատերազմի
տարիներին, հաստատապես կպահանջի մի քանի
պարամունք: Մինչդեռ սովոր յենթաթեմայի խըն-
դիրն ամենևին Կարմիր բանակի պատմությունը
պատմելը չէ, դրան նվիրված է հատուկ հատված:

Տվյալ յենթաթեմայի հիմնական միտքը հետե-
վալն է. — «բուրժուական բանակները բուրժու-
ազիայի դասակարգային սիրապետության գեներ-
են աշխատավորների վրա, ազգային հարսա-
հարման յեւ ուրիշ ժողովուրդների իմպերիալիս-
տական կողոպտման գեներ են: Ի տարբերում
բուրժուական բանակներից, Կարմիր բանա-
կը, — պրոլետարական դիկտատուրայի գեներ, —

պաշտպանում եւ աշխատավորների շահերը, պաշտպան եւ կանգնած *ԽՍՀՄ* սոցիալիզմի շինարարութեան»։ Հատկապես այս միաժամ եւ հենց հարկավոր եւ պարզաբանել Կարմիր բանակայինին։ Մնացած բոլորնյութը պետք ե բացատրվի պատկերավերելու համար, հաստատելու համար այս հիմնական միտքը։

Վերցնենք մի այլ թեմա՝ «Պրոլետարիատի դիկտատուրան ու խորհրդային շինարարությունը»։ Նրա առաջին հատվածն ե՝ «Բուրժուական պետութեան դասակարգային ելությունը»։ Բացի հիմնական մտքից, թե «Բուրժուական պետությունը մի մեքենա չե Բուրժուազիայի ձեռքում՝ հարստահարելու համար աշխատավորներին», այս հատվածի մեջ մտցված են մի շարք տեղեկություններ՝ բուրժուազիայի արհապետութեան մեթոդների, «գեմոկրատիայի», ու ֆաշիզմի մասին, սոցիալ-ֆաշիստների մասին, վորպես բանվոր դասակարգի շարքերում բուրժուական գործակալներին։ Այստեղ եւ խմբակավարը պետք ե նկատի ունենա, վոր «Պրոլետարիատի դիկտատուրան» թեմայի խնդիրների մեջ ամենևին չի մտնում ամբողջ ծավալով սոցիալ-ֆաշիզմի ու ֆաշիզմի հարցի լուսաբանումը. այդ հարցին «Կոմինտերնը» թեմայի մեջ նվիրված ե մի հատուկ հատված։ Մինչդեռ «Պրոլետարիատի դիկտատուրան» թեմայի մեջ այդ

հարցը պետք ե դրված լինի միայն ապացուցելու, հաստատելու, բացատրելու համար բուրժուական պետութեան դասակարգային ելության մասին հիմնական միտքը։

Միայն դեպի ծրագիրն ունեցած այսպիսի մոտեցման դեպքում, միայն խնամքով վերլուծելով ծրագիրը, խմբակավարի բացատրությունը կլինի գործոն, կխփի հարկավոր կետին, իրոք կբեռնի կարմիր բանակայիններին ուշադրությունը հիմնական դրություններին, հիմնական նպատակներին վրա։

V

Դոգմականությունը, վերացականությունը, վերացական ճշմարտություններով գործելը, մերկ փաստերով գործելը—մեր պրոպագանդիստական աշխատանքի ամենագլխավոր ցավերն են, վորոնց դեմ հարկավոր ե վճռական պայքար մղել։

Ասել (կամ մինչև անգամ կարմիր բանակայինների հետ դրի առնել), թե «բուրժուական պետությունը մեքենա չե՝ ճնշելու համար աշխատավորներին» ե բավականանալ այդքանով, նշանակում ե վոչինչ չտեսլ։ Դեռ ավելի վատ. այդ նշանակում ե զրգել կարմիր բանակայիններին՝ անգիր անել ձևակերպումները, առանց գիտակցաբար, խորն ըմբռնելու այն։

Խմբակավարը պարտավոր է հաստատապես հետևել այն կանոնին, վոր յուրամանչյուր առաջագրած դուքսուն, ինչ էլ վոր լինի, պետք է բացատրվի, հիմնավորվի, ապացուցվի: Ավելի լավ է ամենևին չշռափել այս կամ այն հարցը, քան թե հարցը դնել, բայց չբացատրել, քան թե լուր գնալ սոսկ դեգմայով, սոսկ ֆորմուլայով: Այստեղից էլ առաջանում է առավելագույն կոնկրետության պահանջը՝ քաղաքապմունքներում հարցերի պարզաբանման մեջ:

Միշտ քաղաքական ստուգումների արդյունքները վկայում են այն մասին, թե անկոնկրետութունը հիմնական թերությունն է քաղաքապմունքների ծրագրերի՝ կարմիր բանակայինների կողմից լուրացման մեջ: Կարմիր բանակայինը ճիշտ պատմում է կուսակցության գլխավոր գծի ելույթյան մասին, միջոցառվին դրության մասին, սակայն պատասխանում է ընդհանուր առմամբ, չի կարողանում հաստատել իր ձևակերպումները կոնկրետ փաստերով, չի կորոգանում հիմնավորել ու ապացուցել ասածը: Միշտ քաղաքական կարմիր բանակայինը չգիտե միշտ քաղաքական փաստեր, վոր նա պարտավոր է իմանալ, որինով՝ նա չգիտե սոցիալիստական շինարարության հիմնական որեկտների մասին, մինչև իսկ այն որեկտների, վոր գտվում են այն քաղաքում, վորտեղ ապրում է

կարմիր բանակայինը: Խոսելով ֆաշիզմի ելույթյան մասին, չգիտե թե ովքեր են նացիոնալ-սոցիալիստներն ու Հիտլերը: Խոսելով դադութների աշխատավորների պայքարի մասին, չգիտե թե վորտեղ են գտնվում Չինաստանն ու Հնդկաստանը և ինչպես են ապրում այդ յերկրների աշխատավորները: Ինքնին հասկանալի չէ, վոր այդ ձևի գլուրացումը՝ վոչ մի կերպ բավարար համարել չի կարելի:

Մեր պրոպագանդիստական աշխատանքի կոնկրետության հարցը ներկայումս դառնում է վոչ միայն մեթոդական, այլև, ամենից առաջ, քաղաքական հարց: Շատ հաճախ լսում եմ խոսակցություններ այն մասին, թե քաղաքապմունքների ծրագրում շատ են տեսական (թեորետիկ) այնպիսի հարցերը, վոր չի կարելի բացատրել կարմիր բանակայինին: Այդ սխալ է:

Նախ՝ քաղաքապմունքների ծրագիրն ընդհանրապես չի կարող կառուցվել առանց տեսական հարցերի: Տեսական հարցերը դնելը թելադրում է ինքը՝ կյանքը: Առանց հիմնական տեսական հարցերի ըմբռնման, կարմիր բանակայինը չի կարող խորապես հասկանալ վոչ մեր սոցիալիստական շինարարությունը, վոչ կապիտալիստական աշխարհում ծավալվող փոփոխությունները:

Յեկորդ՝ ծրագրում դրված բացարձակապես բոլոր տեսական հարցերը կարելի չէ բացատրել,

և Կարմիր բանակայինը կհասկանա այն, թե ինչ աղ-
հարացները բացատրելու լինենք բաժակաճաճի կոն-
կրետ ձևով: Ահա թե վորն է գլխավոր խնդիրը:
Այդ մասին վկայում են Լենինի ցուցումները. «Նրա
(կոմունիզմի) ամբողջ պրոպագանդը պետք է դրը-
ված լինի այնպես, վոր դործը հանգի պետական
պրակտիկ շինարարության ղեկավարությանը: Կո-
մունիզմը պետք է մատչելի դառնա բանվորա-
կան մասաներին, վորպես սեփական գործ»:

Խմբակավարի կարեվորագույն խնդիրն է՝ վարժ-
վել բացատրել այնպես, վոր հնարավոր լինի ա-
ռուրյա աշխատանքի լուրագանչուրը քաղ կապել
սոցիալիզմի ընդհանուր պրոբլեմների հետ, վոր
սոցիալիստական շինարարության պրակտիկայի
վերջրած տաճարն է կոնկրետ փաստերով կարո-
ղանա դաստիարակել կարմիր բանակայիններին ու
սովորեցնել նրանց կոմունիզմ: Խմբակավարը պետք
է կարողանա վոչ միայն ճիշտ պարզաբանել կու-
սակցական քաղաքականության հիմունքները, այլև
այդ պարզաբանումը կատարել այն կոնկրետ փա-
ստերի հիման վրա, վոր ամեն որ բերում են թե-
թերը, որը-որին ծանոթացնի կարմիր բանա-
կայիններին սոցիալիզմի շինարարության փա-
ստերի հետ, սոցիալիստական կառուցման որեկա-
ների հետ, նոր կառուցված ու գործի գցված
գործարանների ու ֆաբրիկների հետ, ամբողջ

ժամանակ ոգտագործելով ԽՍՀՄ քարտեզը, լու-
սանկարները, դիագրամները և այլն:

Պարզաբանելով միջազգային հեղափոխական
շարժման հարցերը՝ խմբակավարը պետք է վոչ
միայն հաղորդի կարմիր բանակայիններին Կո-
մինտերնի լոգունգները, այլև ցույց տա, թե ինչ-
պես են ապրում կապիտալիստական յերկրների
աշխատավորները. վառ, կարմիր բանակայինների
հասկացողությանը մատչելի, որինակներով ցույց
տա, թե ինչպես են մարտնչում բանվորներն իրենց
ազատագրման համար, ինչպես են աշխատում կո-
մունիստական կուսակցութունները: Խմբակավա-
րը պետք է ծանոթացնի կարմիր բանակային-
ներին վոչ միայն Կոմինտերնի գործկոմի պլենումի
թեզիսների հետ, այլև կոնկրետ փաստերի հետ
հեղափոխական պայքարի կոնկրետ մարդկանց հետ,
կոմունիստների ու նրանց թշնամիների՝ ֆաշիստ-
ների ու սոցիալ-ֆաշիստների կոնկրետ գործերի
հետ: Այսպեղ ևս աշխարհագրական քարտեզները,
պլակատներն ու պատկերավորող այլ նյութերը
պետք է լինեն առուրյա անհրաժեշտ ձեռնարկներ:
Միայն այս բոլորի պահպանումով խմբակավարի
բացատրութունը չի լինի դժգոյատկան ու վե-
րացական, միայն այս պայմանով այս բացատրու-
թյունը խորապես կարմատանա կարմիր բանա-
կայինների գիտակցության մեջ:

Այս տարի քաղաքապետներն անհամեմատ ավելի լավ են ապահովված ցուցադրական ձեռնարկներով, քան նախընթաց տարիներում: Գուցադրական պլակատներ կան համարյա բոլոր հիմնական թեմաների վերաբերյալ: հարկավոր է միայն կարողանալ հմտորեն ոգտագործել այդ:

Միևնույն ժամանակ խմբակավարը պետք է հարկ չեղած դեպքում կազմակերպի ցուցադրական ձեռնարկների պատրաստումը (պլակատների դիագրամների և այլն) սեփական ուժերով, մանավանդ ընթացիկ քաղաքականության հարցերի առթիվ:

Խմբակավարը պետք է հաստատապես հիշի, վոր ցուցադրական ձեռնարկների հմուտ ոգտագործումը հսկայական չափով ապահովում է քաղաքապետներին կոնկրետությունը:

VI

Քաղաքապետներին կոնկրետություն հարցի հետ անխզելիորեն կապված է նրանց նրա՝ պարտական հարցը:

Մեզանում շատ հաճախ խոսում են քաղաքապետներն առօրյա կյանքի հետ «շաղկապելու» անհրաժեշտության մասին: գործնականում այդ «շաղկապումը» սովորաբար հանգում է նրան, վոր միաժամանակ հիշատակում են կա-

նարդու ձեռք, հաճախ ձեռքներ են կուտակցության կամ կառավարության մասին, կամ հաղորդում են թերթերից պատահաբար վերցրած՝ միջազգային դրուժյուն կամ սոցիալաբարության առանձին յերկույերեք փաստերի մասին:

Մեր քաղաքապետներին հրատապության նման ձեռք բացարձակապես բավական չէ: Ներկայումս պետք է խոսել արդեն վոչ թե «քաղաքապետներին առօրյա կյանքի հետ շաղկապման մասին», այլ ոչնչ մասին, վոր քաղաքապետներն ունենում տարվոյ մեր ամբողջ պրոպագանդը վճռականապես ուղղի ի դեպի առօրյա կյանքի կողմը, կուտակցության գլխավոր գծի, սոցիալաբարության շինարարության ու կարմիր բանակի շինարարության հերթական խնդիրների պարզաբանման կողմը, միջազգային դրուժյուն, միջազգային հեղափոխական շարժման փաստերի պարզաբանման կողմը և այլն:

Այդ պատճառով կարևորագույն պահանջը, վոր պետք է առաջադրել դեպի խմբակավարի բացատրությունը, պետք է լինի հետևյալ պահանջը՝ բացատրությունը ծայրից ծայր, ամբողջովին պետք է լինի հրատապ:

Այդ նշանակում է, նախ՝ բացատրելով քաղաքապետներին ծրագրում նշված հարցերը, չէ՛ պետք է միևնույն ժամանակ լուրջության մասին

կարմիր բանակայինն հուզող հարցերը Գաղաթա-
րապմունքների պրակտիկայում հաճախ նկատվում
է, վոր խմբակավորը լերկար ու բարակ, մանրա-
մասնորեն կանգ է առնում սոցիալիստական շի-
նարարութեան թեորեաթի մի շարք ընդհանուր
հարցերի վրա: Բայց հենց վոր բանը հասնում է
սոցիալիստական շինարարութեան պրակտիկայի
հարցերին, խմբակավորն աշխատում է խուսափել
այդ հարցերից, խոստանում է պարզաբանել «հա-
ջորդ անգամ», հետաձգում է նրանց բացատրու-
թյունը մինչև լերեկո և այլն: Իհարկէ, նման մո-
տեցումը խիստ իջեցնում է քաղաքապմունքների
դաստիարակչական ազդեցութիւնը, կարմիր բա-
նակայինների մեջ թողնում է շատ տարակուսելի
հարցեր, չըմբռնած հարցեր: Վոչ թէ խուսափել
է պետք հրատապ հարցերից, այլ մտածված ձե-
վով, մանրամասնորեն պարզաբանել այն, — ահա
այն կարեւորագույն պայմանը, վորից ամբողջովին
կախված է քաղաքապմունքների վորակը:

Յեկրորդ՝ բացատրելով քաղաքապմունքների
ծրագրից այս կամ այն թեման՝ խմբակավորը պետք
է կարողանա շոշափել, գտնել այդ թեմայի այն
հարցերը, վոր տվյալ մոմենտին հառուկ կարևոր
նշանակութիւն են ստանում, և կարողանա կենտ-
րոնացնել այդ հարցերի վրա կարմիր բանակա-
յինների ուշադրութիւնը, բացատրել այդ հարցերն

առանձնապէս խնամքով ու մանրամասնորեն՝ կու-
սակցութեան առաջադրած նոր մարտական խն-
դիրների տեսակետից:

Յերրորդ՝ հաստատելով այս կամ այն դրու-
թյունները կոնկրետ որինակներով, խմբակավորը
պետք է ոգտագործի ընթացիկ մոմենտի ամենից
թարմ ժամանակակից փաստերը թէ սոցիալիստա-
կան շինարարութեան և թէ միջազգային դրութեան
ընագավառում:

Ժամանակակից պայմաններում քաղաքապ-
մունքները, ավելի քան լերբէս, պետք է դառնան
քաղաքական ազիտացիայի հուժկու գինք: Իհար-
կէ՝ սխալ կլինէր քաղաքապմունքների ամբողջ
բովանդակութիւնը վերածել միայն ընթացիկ
քաղաքականութեան հարցերի պարզաբանմանը:
Կարմիր բանակայինը լերբէս, ինչպէս հարկն է,
չիհասկանա ընթացիկ քաղաքականութեան մի շարք
հարցեր, լեթէ նա չիմանա մարքս-լենինյան
թեորիայի տարրական հիմունքները: Սակայն
միևնույն ժամանակ շարունակ պետք է նկատի
ունենալ, վոր քաղաքապմունքների ծրագրից
թեորեաթի հարցերը պետք է պարզաբանել վոչ
թէ վերացական ձևով, այլ ամենասերտ կերպով
կապելով կուսակցութեան ընթացիկ քաղաքակա-
նութեան հարցերի հետ, որը-որին ծանոթացնելով
կարմիր բանակայինն սոցիալիստական շինարար-

ըության, իՍՅԾ միջազգային դրության, կապի-
տալի լերկրներում տնտեսական ճգնաժամի զար-
գացման ու հեղափոխական ճգնաժամի աճման
ամենաթարմ փաստերի հետ:

VII

Խմբակավարի բացատրութիւնը պետք է լինի
մասշտաբի:

Ի՞նչպէս կարելի լի հասնել բացատրության
մատչելիության:

Մատչելիութիւնը ձեռք է բերվում նախ նը-
բանով, վոր խմբակավարը կարողանում է բացա-
տրել ծրագրի բոլոր տեսական դրութիւնները
կոնկրետ ձևով, կոնկրետ որինակաների հիման
վրա: Այդ մասին մենք արդեն խոսեցինք վերևում:

Յերկրորդ՝ նա ձեռք է բերում խմբակավարի
լեզվի պարզութիւնը, մատչելիութիւնը:

Լեզվի հարցը կարևորագույն հարց է, վորից
հսկայական չափով կախված է խմբակավարի
բացատրութիւնների յուրացումը, կարմիր բա-
նակալիւնների կողմից:

Մի փոքրիկ որինակ նորերս մի շարք զորա-
մասերում տեղի ունեցավ կարմիր բանակալիւն
քաղաքապետից մի քանի ընթերցում: Այդ ըն-
թերցումը մի անգամ ևս ցույց տվեց, վոր շատ

կարմիր բանակալիւններ չեն հասկանում մի շարք
գրական բառեր ու դարձվածքներ:

Այստեղից արդեն պարզ է, թե վճռաւոր կարևոր
է խմբակավարի համար այս կամ այն հարցը
բացատրելիս ընտրել բառերն ու դարձվածքները:
Շատ բան խմբակավարի համար հասկանալի չէ,
իսկ կարմիր բանակալիւնները կամ չեն հասկանում,
կամ սխալ են հասկանում: Կան, իհարկ՝ մի շարք
ոտարերկրյա բառեր, առանց վորոնց դժվար է
յուրա գնալ («իմպերիալիզմ», «ինտերվենցիա»),
սակայն գործածելով այս բառերը՝ խմբակավարը
պետք է շարունակ ստուգի, թե ինչպէս են հաս-
կանում կարմիր բանակալիւններն այդ բառերը,
շարունակ պետք է բացատրի:

Նույնչափ սուր ձևով է դրված խմբակավարի՝
պատկերավոր, կենդանի, հետաքրքիր ձեւով բա-
ցատրելու հմտութիւն հարցը, ժամանակին համե-
մատութիւն, կատակ և այլն գործադրելու հմ-
տութիւն հարցը:

Խմբակավարը պետք է խնամքով մշակի իր
վճռը, խնամքով մտածի իր յուրաքանչյուր ար-
տահայտութիւն ու բառի մասին, վարժվի բացա-
տրել լավ վոչ միայն բացատրութիւն բովան-
դակութիւն տեսակետից, այլև նրա լեզվի ու ձևի
տեսակետից:

Միջանի խոսք ել բացատրության ընթացքում ընթերցանության մասին:

Չափազանց հաճախ, ցանկանալով տալ կոնկրետ ու հրատապ բացատրություն կամ կոմենտալով կազմակերպել կարմիր բանակալիներ ինքնուրույն աշխատանքը պարապմունքների համար՝ խմբակավարը քաղաքապմունքների ժամանակ սկսում է կարդալ լերկար քաղվածքներ դասազրքից, թերթերից և այլն:

Իհարկե, կարդալ քաղաքապմունքներում կարելի չէ ու պետք է: Բայց միևնույն ժամանակ խմբակավարը միշտ ել պետք է հիշի, վոր իր հիմնական զենքը կենդանի խոսքն է: Այդ պատճառով քաղաքապմունքներում հարկավոր է վորքան կարելի չէ քիչ կարդալ. պետք է կարդալ միայն ամենակարճ ու վառ ցիտատները, թերթերից վերցրած ամենակարճ ու վառ քաղվածքները, իսկ փաստացի նյութը, վորպես կանոն, պետք է բացատրել սեփական խոսքերով:

ԻՆՉՊԵՍ ՏԱԼ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

I

Նոր մեթոդիկայով քաղաքապմունքներից հետո տարվող ինքնապատրաստության հիմնական խըն-

դիրն է՝ ամրացնել կարմիր բանակալիներ զիտակցության մեջ աչն, ինչ արդեն բացատրել եր խմբակավարը: Միաժամանակ, ինքնապատրաստությունը պետք է նպաստի կարսիւր բանակալին մեջ գրգռվ ու քերթով ինֆուռույն աշխատանքի սովորներ դաստիարակելուն:

Ցենելով այս հիմնական խնդրադրումից՝ պետք է լուծել աչն հարցը, թե ինչպես տալ առաջադրությունը:

II

Հարկավոր չէ ձգտել, վոր ինքնուրույն աշխատանքի համար առաջադրությունն անպայման ընդգրկի թեմայի առանց բացառության բոլոր հարցերը: Ինքնապատրաստության համար յուրաքանչյուր պարապմունքից հետո հատկացվում է վոչ ավելի, քան $1-1\frac{1}{2}$ ժամ: Այդ ժամանակը վորևե չափով ափելացնելը նպատակահարմար չէ: $1-1\frac{1}{2}$ ժամում կարմիր բանակալինը միջին հաշվով կարող է մշակել դասազրքից վոչ ավելի քան 4-6 էջ (ավելի պատրաստված խմբակներում վոչ ավելի քան 6-8 էջ): Այդ չի նշանակում, վոր կարմիր բանակալինը դասազրքից ինքնուրույն պետք է կարդա միայն 4-6 էջը: Ընդհակառակը, ցանկալի չէ վարժեցնել կարմիր բանակալինն դասազրքից կարդալ տվյալ թեմայի

ամբողջ նյութը՝ Մշակելով թեման, խմբակավարը պետք է անպայման հանձնարարի կարմիր բանակայիններին կարդալու դասագրքի ամբողջ համապատասխան գլուխը։ Բաց պարտավորեցնել կարմիր բանակայինին կարգալ ու մշակել առաջադրության կարգով, կարելի չէ միայն ամենասահմանափակ թվով եջեր։ Այդ փոքրաթիվ եջերը պետք է ուշադրութեամբ ջոկել այնպիսի հաշվով, վոր նրանց մշակումն ապահովի լենթաթեմայի 2—3 հիմնական վճռական հարցերի հաստատուն յուրացումը, ինչպես նաև, վոր առանձնապես կարևոր է, այն հիմնական փաստացի նյութի յուրացումը, վոր կարմիր բանակայինին անհրաժեշտ է գիտենալ (հիմնական սովորներ սոցիալարության մասին, խորհրդային սահմանդրության հիմունքները, կառավարության կարևորագույն վորոշումները և այլն)։ Առաջադրութուն տալով, խմբակավարը պարտավոր է ճիշտ մատնանշել, թե ի՞նչ հարցից և դասագրքի ի՞նչ եջեր պետք է կարդալ։

III

Սովորաբար քաղաքական պարապմունքների պրակտիկայում առաջադրութունները ձևակերպվում են հետևյալ ձևով․ կարգացե՞ք դասագրքից այսինչ եջերը, կամ թերթերից՝ այս ինչ տեղերը։

Այդ քիչ է։ Ինքնուրույն աշխատանքի համար առաջադրութուն տալով՝ խմբակավարը պետք է մատնանշի վոչ միայն այն, թե ի՞նչ պետք է կարդալ, այլև այն, թե ի՞նչ պետք է անել։

Այդ հարկավոր է, ամենից առաջ՝ նրա համար, վորպեսզի կարմիր բանակայինը գիտենա, թե ինչու չէ նա կարգում դասագրքից այս կամ այն հատվածը։ Կարգալով՝ կարմիր բանակայինը շարունակ պետք է իր առաջ տեսնի իր ընթերցանության նպատակը․ պատասխանել այս կամ այն կոնտրոլ հարցին, գրի առնել այս կամ այն միտքը և այլն։ Միայն այս պայմանով կարմիր բանակայինը կկարգա գիտակցաբար և վոչ թե մեխանիկորեն, կկարողանա ըմբռնել կարգացածի մեջ գլխավորը, ջոկել այդ լերկորդականից։

Այդ հարկավոր է նաև նրա համար, վորպեսզի կարմիր բանակայինը սովորեցնել կուտակի գրքով ու թերթով ինքնուրույն աշխատանքի համար։ Ի՞նչ պետք է անել՝ ինչպիսի՞ ինքնուրույն աշխատանք պետք է կատարի կարմիր բանակայինը, — այդ հարցն ամբողջովին լուծվում է, լեղներով ծրագրի պահանջից՝ կարմիր բանակայինի պատրաստականության, զարգացման, գրագիտության ճիշտ հաշվառումով։

Սակավ պատրաստված կարմիր բանակայինի

համար կտրելի չե գործադրել ինքնուրույն աշխատանքի հետևյալ ձևերը:

1. Այս կամ այն կոնտրոլ հարցի բանավոր, իսկ առանձին դեպքերում՝ գրավոր պատասխան:

2. Ցիտատաների արտագրություն, թվերի գրանցում, ամենապարզ դիագրամների արտանկարում ու կազմում և այլն:

3. Աշխատանք քարտեզով. նրա վրա լերկրներ, գաղութներ գտնելը և այլն. աշխատանք ուրվագծալին (կոնտուրալին) քարտեզով, նրա վրա ռալոնների, գաղութների գծագրումը և այլն:

Ավելի պատրաստված կարմիր բանակալիներին, գնդալին զորոցների կուրսասանների համար կարող են գործադրվել ավելի բարդ ձևեր. հատվածի պլան կազմելը, այդ հատվածի գլխավոր միտքը գրի առնելը, ինքնուրույն յեղութի համար պլան կազմելը (սեագիր գրանցում), այս կամ այն հարցի վերաբերյալ ադպիսի յեղութի համար նյութեր ու փաստեր հավաքելը, թերթի համար թղթակցություն կազմելը և այլն:

Խմբակավարը պետք է հմտորեն ոգտագործի ինքնուրույն աշխատանքի ամենաբազմազան ձևերը, ուսումնական տարվա սկզբին սկսելով ամենապարզ ձևերից և աստիճանաբար անցնելով ավելի բարդ ձևերին:

Առանձնապես կարևոր է, վարպետի առա-

ջադրություն տալով խմբակավարը խուսափի «հավասարումից», իր խմբակի բոլոր կարմիր բանակալիների նկատմամբ միատեսակ մոտեցումից: Խմբակները սակավ դեպքերում են միատարր լինում: Խմբակավարը պետք է շերտավորի առաջադրությունը թե կարգալու յենթակա եջերի քանակի և թե ինքնուրույն աշխատանքի բնույթի տեսակետից: Ավելի պատրաստված կարմիր բանակալիներին խմբակավարը պետք է տա ավելի բարդ առաջադրություն: Այս պատճառով նշելով այս կամ այն յենթաթեմալի առաջադրությունը՝ խմբակավարը պարտավոր է կազմել այն առնվազն յերկու վարիանտով, իր խմբակի առաջալոր, ամենից պատրաստված կարմիր բանակալիներին լրացուզիչ նյութ տալով ընթերցանության համար և տալով ավելի բարդացրած ինքնուրույն աշխատանք:

IV

Վերջին տարվա քաղաքապետներին փորձը ցույց տվեց, վոր կարմիր բանակալինը, մեծ մասամբ հեռանալով պարապմունքից, չգիտե, թե ինչ է ինքն անելու ինքնապատրաստության ժամանակ: Սովորաբար խմբակավարն առաջադրությունը հաղորդում էր վոչ թե բոլոր կարմիր բանակալիներին, այլ միայն ինքնապատրաս-

տությունը ղեկավարող կրտսեր հրամանատար-
ներին:

Այդպիս մոտեցումը հիմնովին սխալ է. առա-
ջադրութեանը ծանոթ պետք է լինի յուրաքան-
չուր կարմիր բանակալին:

Հեռանալով պարապմունքներից, յուրաքան-
չուր կարմիր բանակալին պետք է գիտենա, թե
ինչ պետք է ինքն անի, վորպեսզի պատրաստվի
կրկնողական-ստուգիչ զրույցի համար: Միայն
այս պայմանով կարելի լի ասպնդովել կարմիր
բանակալինի ակտիվութիւնն ու հետաքրքրու-
թիւնն ինքնապատրաստման ժամանակ: Միայն
այս պայմանով կարելի լի կազմակերպել ինքնա-
պատրաստութիւնը սոցիալիստական մրցակցու-
թեան հիման վրա:

Այդ պատճառով խմբակավարը, մշակվող լեն-
թաթեմայի բովանդակութիւնը բացատրելուց
հետո, պետք է հենց տեղն ու տեղը, դեռ կար-
միր բանակալիներին չցրած, հաղորդի նրանց,
թե ինչ պետք է նրանք կարդան և ինչ պետք է
անեն ինքնապատրաստութեան ժամանակ: Ավելի
լավ է, վոր կարմիր բանակալիները զրի առնեն
առաջադրութիւնն իրենց տետրում:

Բացի առաջադրութիւնից, կարմիր բանակա-
լիներ պետք է ծանոթ լինի նաև այն կոնարող
հարցերի հետ, վորոնց հիման վրա պետք է

ծավալի կրկնողական-ստուգիչ զրույցը: Առա-
ջադրութեան մեջ կարող են չմտնել բոլոր կոնա-
րող հարցերը, բայց կարմիր բանակալինը պետք
է լիովին գիտենա, թե ինչ են իրենից հարցնելու
կրկնողական-ստուգիչ զրույցի ժամանակ:

V

Վերջում մի քանի խոսք՝ ինքնապատրաստու-
թեան ժամանակ թերթի ոգտագործման մասին:

Թերթն ընդհանրապես թույլ է ոգտագործ-
վում մեղանում քաղաքապմունքներում: Յեվ
յեթե նա վորոշ դեր դեռ խաղում է խմբակա-
վարի զրույցի ընթացքում, ապա ինքնուրույն
աշխատանքում նա համարյա չի ոգտագործվում:

Մինչդեռ թերթի ոգտագործումն ինքնապատ-
րաստութեան ժամանակ չափազանց կարևոր է
Քաղաքապմունքների նոր ծրագրի պահանջների
թվում կա նաև հետևյալ պահանջը. սովորեցնել
կարմիր բանակալիներին կարդալ և ըմբռնել թերթը:
Այդ նպատակին կարելի լի հասնել այն պայմանով
միայն, յեթե թերթը կանոնավոր ոգտագործվի
ինքնապատրաստութեան ժամանակ:

Այդ պատճառով, խմբակավարն առաջադրու-
թիւններ պետք է տա վրչ միայն դասադրեից,
ալև թերթից: Այդ հարկավոր է անել բոլոր
ծրագրային թեմաների վերաբերյալ, եւ չենք

խոսում ընթացիկ քաղաքականության թեմաների մասին, վորոնց համար թերթը հանդիսանում է հիմնական նյութը: Իհարկե՝ առաջադրություն մեջ շատ նյութ մտցնել չի հաջողվի: Բայց առանձին փոքրիկ հոդվածներ, նամակներ և, մանավանդ՝ փաստացի նյութ պետք է արվեն յուրաքանչյուր առաջադրության մեջ, վորպես ընթերցանության ու ինքնուրույն մշակման պարտադիր նյութ:

ԻՆՁՊԵՍ ՎԱՐԵԼ ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՍՏՈՒԳԻՉ ԶՐՈՒՅՑԸ

I

Կրկնողական-ստուգիչ զրույց անցկացնելիս յերեք հիմնական խնդիր է առաջադրվում խմբակավորին:

Առաջին խնդիր է՝ խնամքով ստուգել, թե ինչպես են կարմիր բանակայինները յուրացրել այն, ինչ նրանց բացատրված էր և ինչ նրանք կատարել էին ու զրի առել ինքնապատրաստության ժամանակ:

Յերրորդ խնդիրն է՝ ժամանակին ուղղել այն, ինչ կարմիր բանակայինները սխալ են հասկացել: Վերջապես, խմբակավարի յերրորդ խնդիրն է՝ կրկնողական-ստուգիչ զրույցի ընթացքում լրացնել իր բացատրությունները, լեթե հարկա-

վոր է, կարմիր բանակայինին հաղորդել նոր, թարմ, լրացուցիչ նյութ:

Այդ խնդիրները վորոշում են կրկնողական-ստուգիչ զրույցի անցկացման բնութքն ու մեթոդները:

II

Կրկնողական-ստուգիչ զրույցի վորնաշարը հանդիսանում են քաղաքապամունքների ծրագրում զետեղված կոնարու հարցերը: Յուրաքանչյուր լենթաթեմային միջին հաշվով ընկնում է 3—4 կոնարու հարց, վորոնց հետևողական քննարկման շուրջը պետք է ծավալվի զրույցը:

Աշխատանքի կարգը մոտավորապես հետևյալն է, խմբակավորը, նախապես իրազեկ լինելով նախընթաց ինքնապատրաստության արդյունքների մասին, դնում է ամբողջ խմբի առաջնշված կոնարու հարցերից առաջինը և մտածելու համար տալիս է 1—2 րոպե: Այնուհետև՝ ստացվում են կարմիր բանակայինների պատասխաններն այդ հարցին: Նրանից հետո, յերբ խմբակավորը բավականաչափ կպարզի, վոր կարմիր բանակայինները յուրացրել են և հասկացել նյութը, նա լսում է զանազան լրացուչից դիտողություններ ու հարցեր կարմիր բանակայիններից և, վերջապես՝ առաջին կոնարու հարցի վերաբերյալ անում է ամփոփ լեզրափակիչ հետևություն:

Նույն ձևով մշտելովում են նաև մնացած հարցերը:

Զրույցի վերջում խմբակավարը պատասխանում է կարմիր բանակայինների հարցերին, անում է 5—10 բուպեյի ընթացքում հետևություն ամբողջ թեմայի առթիվ և տալիս է առանձին կարմիր բանակայինների կողմից նյութի յուրացման գնահատական:

III

Կրկնողական-ստուգիչ զրույցի արդյունավետութունն ու վորակը կախված է, ամենից առաջ՝ նրանից, թե ինչ չափով խմբակավարը շնորհքին կտանի դրած հարցի քննարկումը:

Ամենից առաջ, ինչ հարկավոր է վորոշել ախտեղ, ալդ աֆն հարցն է, թե ինչ կարգով պետք է հարցաքննել կարմիր բանակայիններին կոնսրուկ հարցերի վերաբերյալ:

Վոմանք գտնում են, վոր խմբակավարը պետք է պարապմունքը տանի աֆնալիսի ձևով, վոր յուրաքանչյուր հարցին անպայման պատասխանեն առանց բացառության բոլոր կարմիր բանակայինները:

Այսպիսի մոտեցումն, իհարկե, սխալ է: Շտապելով լսել ու ստուգել բոլորին, խմբակավարը փաստորեն չի ստուգում վոչ մի կարմիր բանա-

կալինի, զրույցն ընդունում է ձևական, կազմիչ-նի բնույթ:

Սխալ է և մի ալլ մոտեցում. հարցին թողնել պատասխանել միայն նրան, ով կամենում է դրան պատասխանել: Սովորաբար քաղպարապմունքներին խոսում են միայն ամենից ակտիվ կարմիր բանակայինները, իսկ մնացածները լռում են կամ բավականանում են միավանկ պատասխաններով: Իհարկե, չափազանց կարևոր է քաղպարապմունքն անցկացնելիս հենվել առաջավոր կարմիր բանակայինների վրա, բայց խմբակավարի խնդիրն է՝ պատրաստել իր խմբակի բոլոր կարմիր բանակայիններին: Կարմիր բանակային ակտիվի կազմակերպումը քաղպարապմունքներին ինքնանպատակ չե, ալլ կարմիր բանակային ամբողջ մասսայի քաղաքական ուսուցման ու դաստիարակության միջոց է:

Զցրվելու համար, կրկնողական-ստուգիչ զրույցին առավելագույն պլանաֆնություն ու կազմակերպվածություն տալու համար, կարմիր բանակայինների յուրացումը վոչ թե մակերեսային ձևով, ալլ խնամքով ու խորապես ստուգելու համար հանձնարարվում է վարվել հետևյալ ձևով. յուրաքանչյուր կրկնողական-ստուգիչ զրույց անցկացնելուց առաջ խմբակավարը վաղորդք իրեն համար նշում է 5—7 հոգուց բաղկացած

կարմիր բանակայինների մի խումբ, վորին նա ուզում է ստուգել: Այդ մի խումբ կարմիր բանակայինների հետ նա պետք է զրուցի առանձնապես ուշադրութեամբ ու մանրամասնորեն, նրանցից առաջին հերթին պահանջի արված հարցերին պատասխանել առանց շտապելու, մտածված ձևով: Մնացած կարմիր բանակայիններին խմբակավորը պետք է հարցնի ա՛յն դեպքում, լերբ ասի մի խումբ կարմիր բանակայիններից վոչ վոք ճիշտ պատասխան չի տվել հարցերին, կամ, լերբ կարմիր բանակայիններից վորևէ մեկը կամենում է արդեն տատծին մի վորևէ լրացուցիչ նյութ տալ:

Ավելի պատրաստված կազմ ունեցող խմբակներում թույլատրվում է պահանջել կարմիր բանակայիններից վոչ միայն հարցին կարճաբոտ պատասխան տալ, այլև տասել փոքրիկ, ինքնուրույն պատրաստած ներածական: Համապատասխան առաջադրութիւնը արվում է բոլոր կարմիր բանակայիններին, իսկ զեկուցողներին նշում է խմբակավորն արդեն ստուգիչ պարպմունքի ժամանակ:

Այդպիսի մոտեցումով խմբակավորը կարող է սխառմաբար, առանց շտապելու, հերթով ստուգել իր խմբակի բոլոր կարմիր բանակայինների յուրացումը:

IV

Խմբակավորի բարձր պահանջկոտութիւնը քաղաքապմունքների բարձր վորակի է կարմիր բանակայինների յուրացման կարևորագույն լեռաշխիքն է:

Մինչդեռ քաղաքապմունքների անցյալ տարիների փորձը ցույց է աւելիս, վոր խմբակավորի պահանջկոտութիւնը դեպի կարմիր բանակայինները շատ հաճախ անբավարար է: Խմբակավորը լերբեմն բավարարվում է կարմիր բանակայինի միավանկ պատասխանով, լերբ նրան տվել է «գլխի գցող» հարց և ասի միավանկ պատասխանի հիման վրա կարմիր բանակայինի յուրացումը գտնում է բավարար և մինչեւ իսկ լավ:

Քաղաքապմունքները կարմիր բանակում ապահովված են ա՛յն ամենով, ինչ անհրաժեշտ է: Այժմյան կարմիր բանակայինը, ճնշող մեծամասնութեամբ, բանվոր ու կոլտտեսական է և աճել է քաղաքականապես ու կուլտուրապես: Այսպիսի պայմաններում կան բոլոր հիմքերը քաղաքապմունքների յուրացման գործում առաջադրելու կարմիր բանակայինին բարձր պահանջներ: Իհարկե, ծալրահեղութիւն կլինեք պարտավորեցնել կարմիր բանակայինի խմբակավորի բոլոր հարցերին տալ տեսականապես հղկված, գրա-

կանապես անթերի ձևակերպումներ: Սակայն առաջադրել վորոշ պահանջներ կարելի չե ու պետք է:

Պահանջների վորոշ շրջանը կարմիր բանակայինների տարբեր խմբակների նկատմամբ նշված է քաղաքապետականների ծրագրում: Խմբակավարը բոլոր միջոցներով պետք է հասնի նրան, վոր լիովին կատարվեն այդ պահանջները:

Կրկնողական-ստուգիչ զրույցը կարևորագույն լծակ է խմբակավարի ձեռքում՝ կարմիր բանակայինների կողմից քաղաքապետականների բարձր յուրացման համար մղած պայքարում: Անցկացնելով կրկնողական-ստուգիչ զրույց, խմբակավարը պարտավոր է ցուցաբերել բարձր պահանջ-կոտուխուն դեպի կարմիր բանակայինները:

Այդ պահանջկոտուխունը պետք է արտահայտվի նրանով, վոր խմբակավարը պետք է ուշի-ուշով ստուգի թե ինչպես է յուրաքանչյուր կարմիր բանակային կատարել իր առաջադրու-թյունը:

Այդ պահանջկոտուխունը պետք է արտահայտվի նաև խմբակավարի փած հարցերի բնույթով: Խմբակավարը պետք է պահանջի վոչ թե միավանկ պատասխաններ, վոչ թե ձևականորեն անգիր արած ձևակերպումներ, այլ խելացի, հիմնավոր-ված պատասխան՝ ծրագրում գետեղված հիմնա-

կան կոնարու հարցերին: Միայն այն դեպքում, թերե կարմիր բանակայինը կառայի հիմնական հարցի պատասխանը, կարելի չե համարել, վոր կարմիր բանակայինը յուրացրել է նյութը և գիտակցորեն է վերաբերվում դեպի այդ հարցերը:

Քաղաքապետականների տեսչական-ստուգման նոր ցուցումների համաձայն, յուրաքանչյուր առանձին կարմիր բանակայինի գիտելիքների գնահատականը կարող են տալ միայն խմբակավարն ու քաղղեկը, իսկ տեսչական ստուգողը գնահատական է տալիս վոչ թե առանձին կարմիր բանակայիններին, այլ ստուգվող ամբողջ ստորաբաժանմանը: Տեսչական ստուգող գնահատականի ճշտութունը խոշոր չափով կախված է նրանից, թե ինչ չափով է խմբակավարն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում սխառեմբար ու խորը ուսումնասիրել յուրաքանչյուր կարմիր բանակայինին: Խմբակավարը պետք է պարզ գիտակից իր պատասխանատվութունը կարմիր բանակայինների գիտելիքների յուրացման համար և յերբեք վոչ մի պարագայում չպեսե է իջեցնի պահանջկոտուխունը: Բոլոր դեկավար աշխատողները պետք է անխնա պայքար մղեն պահանջ-կոտուխան իջեցման փորձերի դեմ, իսկ առավել ևս՝ աջակցություն տանափոքր արտահայտու-թյունների դեմ:

Սակայն ստուգիչ զրուցքը նպատակ ունի վոչ միայն ստուգել կարմիր բանակայինների յուրացումը, այլև ժամանակին շտկել այն, ինչ կարմիր բանակայինները սխալ են հասկացել, ինչպես նաև հաղորդել կարմիր բանակայիններին լրացուցիչ տեղեկություններ:

Ինչպես իրագործել այդ պրակտիկայում:

Այստեղ հիմնականն այն է, վոր խմբակավարը վոչ միայն հարցեր տա կարմիր բանակայիններին ու պահանջի նրանցից պատասխաններ, այլև ինքը ձևակերպի հիմնական դրությունները: Նրանից հետո, յերբ նա հարցրել է կարմիր բանակայիններին, ինքը պետք է տա կոնտրոլ հարցի ամփոփ, հիմնավորված պատասխանը:

Դրա հետ միասին, խմբակավարը պետք է յուրաքանչյուր հարցից հետո կարճ ամփոփի յուրաքանչյուր կարմիր բանակայինի տասածը և տա նրանց գնահատականը, նշելով, թե այդ յուրաքանչյուր յելույթից վորն եր ճիշտ և վորը՝ սխալ: Նոր մեթոդիկայով քաղպարապմունքների անցկացման առաջին փորձը ցույց տվեց, վոր խմբակավարը հաճախ մոռանում է այդ խնդրի մասին և քննադատության չի յենթարկում կարմիր բանակայինների սխալ տրտահայտությունները: Այդ անհանդուրժելի լե: խմբակավարը պարտավոր է

ամենից առաջ ամենախիստ քննադատության յենթարկել առանձին ուղորտունիստական, դասակարգայնորեն խորթ արտահայտությունները, հենց վոր այդպիսի տրտահայտություններ տեղի յեն ունենում:

Բայց և այն դեպքում, յերբ կարմիր բանակայինի սխալ յելույթը բացատրվում է ուղղակի նրանով, վոր նա չի յուրացրել հարցը, այս դեպքում ևս, կարմիր բանակայինի ավելի լավ դաստիարակության նպատակով, սխալ յելույթը պետք է յենթարկել ուշադիր վերլուծման ու քննադատության և դրան պետք է ստուգվի ձևով հակադրվի ճիշտ դրությունը: Իհարկե՝ այդ կարելի յեանել առանց ավելորդ խստության, բայց հանգիստ, դործարար, խելացի քննադատությունն անհրաժեշտ է:

Առանց դրան կրկնողական — ստուգիչ զրուցքը կնվազեցնի իր քաղաքական նշանակութունը և կկորցնի իր ուսանելիության մեծ մասը, իսկ վորոշ դեպքերում կարող է ուղղակի վնաս բերել,

Քաղպարապմունքների նոր մեթոդն ունի այն առավելությունը, վոր այդ մեթոդով ստուգումը դառնում է քաղպարապմունքների որդանական մասը: Կարմիր բանակայինը, լսելով բացատրու-

թյունները, ինքնուրույն մշակելով նյութը, գիտե-
 վոր խմբակավարն անպայման պետք է ստուգի
 մեակվող հարցի յուրացումը: Այդ, ինչպես ցույց
 տվեց փորձը, հանդիսանում է ամենաուժեղ ազ-
 դակը բացատրելու համար կարմիր բանակայինի
 ակտիվությունը, նրա շահագրգռվածությունը դե-
 պի աշխատանքը:

Քաղաքապետները նոր մեթոդիկայի այդ
 առավելությունը հնարավորություն է առիթս
 ամենալավն չափով ծավալելու սոցիալիստական
 մրցակցությունը: Կրկնողական-ստուգիչ գրույցը
 պետք է կառուցվի կարմիր բանակայինների
 առավելագույն ակտիվության հիման վրա, առ-
 անձին կարմիր բանակայինների միջև, տվյալ
 խմբակի մեջ մանող շուկերի միջև կնքած սոցիա-
 լիստական մրցակցության հիման վրա: Խմբակա-
 վարը պետք է շարունակ շեշտի, թե ինչպես է
 նյութը յուրացրել այս կամ այն կարմիր բանա-
 կայինը, այս կամ այն շուկը, ինչպես է առաջա-
 գրությունը կատարել առանձին կարմիր բանա-
 կայինը, ինչպիսի են, ըստ շուկերի, ինքնապատրաս-
 տության արդյունքները և այլն: Կրկնողական-
 ստուգիչ գրույցի վերջում խմբակավարը պետք է
 յուրաքանչյուր լինթաթեմայից տա այն բոլոր
 կարմիր բանակայինների առաջադիմության գնա-
 հատականը, վորոշց նա հարցրել է, պետք է

մատնանշի, թե յուրացրել են արդյոք նրանք,
 թե չեն յուրացրել թեման, ինչ են թույլ յուրա-
 ցրել: պետք է նշի առաջավորներին, հարվածա-
 լիններին: Հենց այստեղ խմբակավարը պետք է
 ցուցումներ տնի հայտարարած թերությունների
 վերացման մասին, թույլ յուրացրած նյութի մշակ-
 ման մասին, պետք է տա կոնկրետ առաջադրու-
 թյուններ ավելի ուժեղ կարմիր բանակային-
 ներին՝ աշխատելու համար յետ մնացողների հետ
 և այլն: Թեման ամբողջութեամբ վերցրած անց-
 նելուց հետո, ամփոփելով մշակման արդյունքները,
 խմբակավարը պարտավոր է առաջին սոցմըր-
 ցակցության պայմանագրերի կատարման հանդե-
 քում:

ԻՆՁ, ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ԳՐԻ ԱՌՆԵԼ

I

Գրանցումը քաղաքապետներում միջոց է
 լավագույն ձևով ամրացնելու համար կարմիր բա-
 նակայինի հիշողության մեջ խմբակավարի բա-
 ցատրությունները: Նա միջոց է դաստիարակելու
 համար կարմիր բանակայինի մեջ՝ գրքով ու թեր-
 թով ինքնուրույն աշխատանքի սովորեցնել:

Գրանցման ձևերը կարող են լինել չափազանց
 բազմաթիվ:

Կարմիր բանակայինների հիմնական մասավի-

համար կարող են գործադրվել գրանցման արարչական ակտեր:

— Թելադրութեամբ ամփոփ լեզրակացութիւններէ ու կոնսորտ հարցերի պատասխանների գրանցում:

— Դատագրելից ու թերթից (գրատախտակից) առանձին ցիտատների, թվերի արտագրութիւն. կոնսորտ հարցերի համառոտ պատասխանների ինքնուրույն ձևակերպում ու գրանցում:

— Ամենապարզ դիտգրումների նկարում և արխ:

Ավելի պատրաստված խմբակների, գնդացրալին դպրոցների կուրսանտների՝ տեխնիկական գործամասերի կարմիր բանակայինների համար կարող են գործադրվել, բացի վերոհիշյալ գրանցումներից, գրանցման ավելի բարդ ձևեր:

— Տվյալ հատվածի հիմնական մտքի գրանցում:

— Տվյալ հատվածի համառոտ պլանների, կոնսպեկտների կազմում:

— Այս կամ այն հարցի վերաբերյալ ինքնուրույն լեզուի (ամփոփ գեկուցման) աշխատանքային գրանցման (պլանի) կազմում:

— Խմբակավարի բացատրութիւնների բովանդակութեան ինքնուրույն գրանցում և արխ:

Այն հարցը, թե ինչ և ինչպես գրանցել, պետք է լուծվի չափազանց կոնկրետ, ճիշտ հաշվի առնելով, նախ՝ մշակվող թեմայի բովանդակութիւնը, և յեկրորդ՝ այդ խմբակի ունրա առանձին կարմիր բանակայինների ընդհանուր զարգացումը: Խմբակավարի խնդիրը պետք է լինի վոչ թե կարմիր բանակայինների տեսերերում այս կամ այն գրանցումների միմյանմի ապահովումը, այլ խմբակավարն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում պետք է սովորեցնի կարմիր բանակայիններին գրանցել (և ոգտվել գրանցածից), սկսելով գրանցման ամենապարզ ձևերից և աստիճանաբար անցնելով գրանցման ավելի բարդ ձևերին:

Այսպես, որինակ՝ շատ հաճախ քննում են այն հարցը, թե ինչպես պետք է գրանցել լեզրակացութիւնները, թելադրութեամբ, թե կարմիր բանակայինը պետք է ինքնուրույն ձևակերպի ու գրի առնի այդ լեզրակացութիւնները: Մինչդեռ հարցն այստեղ շատ պարզ է լուծվում: Ուսման առաջին շրջանում, քանի դեռ կարմիր բանակայինը չի վարժվել ինքնուրույն ձևակերպել, լեզրակացութիւնները և կոնսորտ հարցերի պատասխանները հարկավոր է գրի առնել թելադրութեամբ: Սակայն սխալ կլինեք գրանցման այդ ձևը գոր-

ծաղրել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Խմբակավարը պարտավոր է վարժեցնել կարմիր բանակայիններին ինքնուրույն զբաղակա-
ցությունները. այս բանը խմբակավարը պետք է սովորեցնի համառորեն ու սխառմաբար՝ ամենա-
բազմազան լեզանակներով: Նման լեզանակներից մեկն է, — վոր քաղաքապետներին փաստում արդարացրել է իրեն, — ներգրավել ավելի պատ-
րաստված կարմիր բանակայիններին ու կրտսեր հրամկազմին՝ ոգնելու սակավ պատրաստված կա-
միր բանակայիններին զբաղման գործում: Մի ալլ լեզանակն էլ այն է, վոր հենց պարապմունք-
ների ժամանակ առանձին կարմիր բանակայիններ խմբակավարի ցուցումով կարդում են իրենց գրա-
ցումները, և խմբակավարը տալիս է այդ գրա-
ցումների գնահատականը: Սխառմատիկ աշխա-
տանքն այդ ուղղությամբ հնարավորութուն կտա խմբակավարին մինչև ուսումնական տարվա վերջը վարժեցնել կարմիր բանակայինին ինքնուրույն ձևակերպելու և գրի առնելու ամփոփ լեզա-
կացություններն ու կոնտրոլ հարցերի պատաս-
խանները: Միևնույն ժամանակ, իհարկե, չի բացառ-
վում այն հնարավորութունը, վոր մինչև իսկ ուսուցման տարվա վերջում առանձին, — ամենից պատասխանատու, ամենից բարդ, — լեզրակացու-
թյունները կարմիր բանակայինները գրի կառնեն

խմբակավարի թելադրությամբ, կամ կարտագրեն գրատախտակից:

Մի ալլ որինտի: Քաղաքապետներին նոր մե-
թոդիկան պահանջում է, վորպեսզի մինչև ուսում-
նական տարվա վերջը գնդային դպրոցի կուրսան-
տըն ու հին ծառայության կարմիր բանակայինը տիրապետեն գրքով ու թերթով ինքնուրույն աշ-
խատանքի մի շարք բարդ սովորեցներին (կարողա-
նան կազմել հատվածի պլանն ու կոնսպեկտը, կա-
րողանան կազմել իրենց լեռնային աշխատանքային
գրանցումը և այլն: Այդ պահանջները պայմանավոր-
վում են նրանով, վոր գնդային դպրոցներում ու վարժկան ստորաբաժանումներում պատ-
րաստվում են կրտսեր հրամատարներ, վորոնք վոչ միայն իրենք պետք է կարողանան լավ կար-
գալ գիրք ու թերթ, ալլև պետք է սովորեցնեն ու դաստիարակեն իրենց ջոկի կարմիր բանակա-
յիններին: Այդ պատճառով, խմբակավարի անմի-
ջական պարտավորությունն է՝ շարունակ մա-
րցնել կուրսանցներին քերթով ու գրով ա-
խատելու մեջ: Այստեղ լավ արդյունքների կա-
րելի լե հասնել համառ աշխատանքի ոգնությամբ, սխառմաբար ցույց տալով կուրսանտին, թե ինչ-
պես պետք է կազմել կարդացածի պլանը, ինչ-
պես պետք է անել աշխատանքային գրանցումը, պես պետք է անել աշխատանքային գրանցումը, ինչպես գրի առնել այն, ինչի մասին խոսում է

խմբակավարը և ասլն, ինքնուրույն գրանցումների պարզ ձևերից անցնելով ավելի բարդ ձևերին:

Այս ամբողջ աշխատանքում հարկավոր է շարունակ հաշվի առնել կարմիր բանակայինների տարբեր պատրաստականությունը: Իր առաջագրությունները խմբակավարը պետք է շերտավորի առանձին կարմիր բանակայինների համեմատ, հանձնարարելով ավելի պատրաստվածներին ավելի բարդ աշխատանք, գործադրելով սակավ պատրաստվածների հետ գրանցման ամենապարզ ձևեր:

Գրանցումները կարող են կատարվել թե խմբակավարի բացատրություն պրոցեսում և թե ինքնապատրաստման ու ստուգիչ զրույցի ժամանակ:

Քաղաքացիականների համար սեփական պատրաստականության պրոցեսում խմբակավարը պետք է ստույգ վերոշի, թե հատկապես ինչ պետք է գրի առնել յենթաթեմայի մշակման ժամանակ: Հիմնական պահանջները տրվում են քաղաքացիականների ծրագրով: Այդ պատրաստվածները խմբակավարը պետք է հարմարեցնի իր ամբողջ խմբակի և առանձին կարմիր բանակայինների պատրաստականության մակարդակին:

Այսպես, որինակ՝ համաձայն ծրագրի ցուցման Վիշազգային հեղափոխական շարժումն ու կո-

միսներն» թեմայի առաջին յենթաթեմայով պետք է գրանցվի:

1. «Վոն և Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նշանակությունն ահա պաշարում, վոր մղում է համաշխարային բանվոր դասակարգը բուրժուազիայի դեմ» կոնտրոլ հարցի պատասխանը:

2. Բանվոր դասակարգի պաշարի միջազգային բնույթի մասին լենինի խոսքերը թե՛ «Կապիտալը միջազգային ուժ է. նրան հաղթելու համար հարկավոր է, բանվորների միջազգային միություն, միջազգային յեղբարություն»:

3. Քաղաքացիական պատերազմի ինտերնացիոնալի կանոնադրից կոմիսներնի խնդիրների մասին:

4. «Վոն և Համկոմկուսի (բ) դերը կոմունիստական ինտերնացիոնալում» կոնտրոլ հարցի պատասխանը:

Նշելով ստույգ, թե ինչ պետք է գրի առնել, խմբակավարը պետք է գրանցի հետո վերոշի, թե յերբ պետք է կատարել այս համառոտագրումը: Տվյալ դեպքում կոնտրոլ հարցերի պատասխանների գրանցումն ավելի լավ է անել խմբակավարի բացատրության պրոցեսում: Իսկ կոմիսներնի կանոնադրից քաղաքացիները և լենինի խոսքերի գրանցումը կարմիր բանակայինները կարող

են դրանցել ինքնուրուշն ինքնապատրաստության
ժամանակ: Այդ քաղվածքների գրանցումը պետք
է մտցնել ինքնապատրաստության համար տըր-
վող առաջադրության մեջ:

Այսպես պետք վարվել նաև միջուկ դեպքերում:

Ամենից բարձր պատասխանաւոր գրանցումները
պետք է տրվեն պարապմունքի ժամանակ՝ խմ-
բակավարի ղեկավարութեամբ, նրա անմիջական
հսկողութեամբ: Իսկ ինքնապատրաստության մի-
ջոցին հիմնականում գրի տունել թվերը, առան-
ձին փաստերը, ցիտատաները, վոր կարմիր բանա-
կալինը կարող է արտագրել դասագրքից ու թեր-
թից:

Հաճախ կտրելի լե գիտել այսպիսի պատկեր-
խմբակավարն առաջարկում է կարմիր բանակա-
լինին պատասխանել այս կամ այն հարցին. կար-
միր բանակալինը, կամենալով պատասխանել ավելի
ստույգ՝ դիմում է իր տետրին, բայց խմբակավարը
խստութեամբ կանգնեցնում է կարմիր բանակա-
լինին, առաջարկելով նրան փակել տետրը և պա-
տասխանել առանց նայելու գրանցումներին:

Այդպիսի «մեթոդն» ուղղակի խեղաթյուրում է:
Տետրի մեջ արած գրանցումները հասարակ ձե-
վականութուն չեն: Գրանցումները պետք են կար-
միր բանակալիններին՝ ավելի դիտակցորեն յու-
րացնելու համար մշակվող նյութը: Խմբակավարը

վոչ միայն չպետք է արգելի կարմիր բանա-
կալինին ոգտվել տետրից, այլև, ընդհակառակը,
նա պարտավոր է սովորեցնել կարմիր բանա-
կալինին շարունակ ոգտվել արած գրանցումներից:
Տետրը պետք է քաղպարապումներին պար-
տադիր պատկանելիքը լինի, և՛ խմբակավարի բա-
ցատրության ժամանակ, և՛ ինքնապատրաստու-
թյան ժամանակ, և՛ ստուգիչ զրույցի ժամանակ:
Յեթե կարմիր բանակալինը լավ չի ճանաչում իր
տետրը, յեթե կարմիր բանակալինը չի կարողանում
ոգտվել նրանից, այդ նշանակում է, վոր նա չի
յուրացրել, ինչպես հարկն է, մշակվող նյութը,
ձեռք չի բերել ինքնուրուշն աշխատանքի ամե-
նատարրական սովորներ:

Այս պատճառով, խմբակավարի կարևորագույն
պարտականութենն է շարունակ վարժեցնել կար-
միր բանակալինին տետրից ոգտվելու հմտության
մեջ: Խմբակավարը պետք է պահանջի, վոր կար-
միր բանակալինը, պատասխանելով այս կամ այն
հարցին, ըստ հնարավորին ոգտադործի տետրում
արած գրանցումը, մանավանդ թվական նյութի
վերաբերյալ: Խմբակավարը պետք է պահանջի,
վոր կարմիր բանակալինը, սխալ պատասխանից
հետո, նայի իր տետրը և կարդա թե ինչ եր
այնտեղ գրանցված:

Իհարկէ, այդ վոչ մի դեպքում չպետք է ա-

առջացնի զբռնածն անգիր անելու պահանջ: Անգիր անել տալու ամեն տեսակ տենդենցների դեմ պետք է վճռականապես պայքարել: Բայց միևնույն ժամանակ հարկավոր է պայքարել նաև դեպի գրանցումները լեղած ձևական վերաբերմունքի դեմ: Հիմա ոգտագործման դեպքում գրանցումը լավագույն միջոցն է բարձրացնելու համար քաղաքապետներին լուրացումը:

V

Խմբակավորը պարտավոր է պարբերաբար զննել կարմիր բանակայինների տետրերը: Դժբախտաբար, այդ պարտականությունը խմբակավորները հաճախ չեն կատարում:

Դեպի գրանցումները ցույց տված ձևական վերաբերմունքի հետևանքը լինում է կարմիր բանակային տետրերի խախտուակ գրությունը: Խոսքն այստեղ վերաբերում է վոչ միայն այն մասին, վոր գրանցումը կատարվում է տեխնիկապես անբավարար ձևով, վոր հարկավոր գրանցումը հաճախ անհնար է լինում գտնել կարմիր բանակայինի տետրում, վոր քաղաքապետները չեն պատվաստում կարմիր բանակայինների մեջ ամենատարակա կուլաուրական սովորքներ: Խոսքն այստեղ վերաբերում է նաև այն մասին,

վոր մի շարք դեպքերում կարմիր բանակայինը տետրում գրի չե առնում սխալ, անգրագետ, իսկ չեբեմն՝ քաղաքապետս խեղաթյուրված ձևեր պլամներ:

Կարմիր բանակայինների կողմից ծրագրի յուրացման վորակը պետք է գնահատվի վոչ միայն նրա բանավոր պատասխանների հիման վրա, այլև սերում արած նրա գրանցումների հիման վրա:

Խմբակավորը պետք է սխտեմաբար ստուգի կարմիր բանակայինների տետրերը:

Այդ հարկավոր է անել, ամենից առաջ, յուրաքանչյուր կրկնողական ստուգիչ զրուցի լնթացքում, յուրաքանչյուր յենթաթեմայի մշակման ընթացքում: Գնահատելով այս կամ այն կարմիր բանակայինի պատասխանը, խմբակավորը պետք է միաժամանակ նայի ու գնահատի այն, թե ինչպես է այդ կարմիր բանակայինը գրանցել տետրում և հենց տեղն ու տեղը տացուցումներ և ստիպի ուղղել:

Ամբողջ թեմայի մշակումն ավարտելուց հետո, խմբակավորը պարտավոր է հավաքել կարմիր բանակայինների բոլոր տետրերը, ուշադրությամբ դնել գրանցումները և մանրամասն գնահատական տալ յուրաքանչյուր առանձին կարմիր բանակայինի գրանցումներին:

Կարմիր բանակայինների տետրերի ստուգումը

մտնում ե քաղաքապետներն ստուգող և տես-
չական ստուգումը կատարող բոլոր անձանց պար-
տականութիւնները մեջ:

ՊԵՏՔԱՎԱՆԱՆ Ե ԱՐԴՅՈՔ ՆՈՐ ՄԵԹՈԴՆ ԱՆԳՐԱԳԵՏ
ՈՒ ԿԻԱԳՐԱԳԵՏ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՇԵՏ
ՊԱՐԱՊԵԼՈՒ ՇԱՄԱՐ

I

Այս հարցը հաճախ ե տրվում, ըստ վորում շատ
անգամ չար դիտավորութեամբ՝ վարկաբեկելու
համար նոր մեթոդը, ցուց տալու համար, վոր
նա պետքական ե միայն լավ գրագետ լսարանի
հետ աշխատելու համար, լեզրակացնում են, վոր
այդ մեթոդն անպետք ե շատ գործասերում,
մանավանդ լերկրային հովաքներում, վորտեղ
անգրագետների ու կիսագրագետների քանակն
ավելի շատ ե, քան թե կադրային մասերում:
Այսպէս, որինակ՝ 6-րդ դվիդիալի կոմիսարներէց
մեկը, վորտեղ առաջին անգամ տեղի լեր ունե-
նում քաղաքապետներն փորձը նոր մեթոդի-
կալով, գրում ե՝ «այդ մեթոդն ավելի դրական
ե, ամենից առաջ՝ ընդհանուր կրթական տեսա-
կետից միանգամայն գրագետ լսարանի համար. նա
սակավ արդիւնավետ ե լերկրային գործասերի
նորեկ կարմիր բանակայինների գրագիտութեան

լեղած մակարդակի պայմաններում»... այլ կերպ
ասած՝ նոր մեթոդը լերկրային հրաձիգ գործա-
սերում իբր թե պետքական ե միայն գնդային
դպրոցներում:

Այդպիսի մտեցումը դեպի նոր մեթոդ ավե-
լորդ անգամ վկայում ե նրա ելութիւնը չըմբռ-
նելու մասին: Մենք արդեն քանիցս շեշտել ենք,
վոր հիմնականը նոր մեթոդում այն ե, վոր
խմբակավարը պարտավոր ե ինքը բացատրել
կարմիր բանակայինին ուսումնասիրվող հարցը՝
Վորչափ կարմիր բանակայինը սակավ ե պաւս-
րաւսված, այնչափ ավելի կարիք ունի նա այդ
բացատրութեան: Յուրաքանչյուր քաղաշխատող
անձնական փորձով գիտե, վոր գրուցն ավելի
հեշտ ե ծավալել պատրաստված լսարանի հետ,
քան թե անգրագետ ու կիսագրագետ ունկնդիր-
ների հետ: Այդ պատճառով, բոլոր գործասերում,
անկախ կարմիր բանակայինների գրագիտութիւն-
նից, նոր մեթոդը պետք ե իրագործվի հովաստը
համառութեամբ:

Միևնույն ժամանակ, իհարկե, նոր մեթոդի
գործադրութեան փորձն անգրագետ ու կիսագրա-
գետ կարմիր բանակահիւնների խմբակներում ունի
մի շարք առանձնահատկութիւններ:

Ինչ վերաբերում է անգրագետ կարմիր բանակայինների խմբակներում ուսուցման կարգի մասին, ապա այդ խմբակներում ուսուցման պրոցեսի կազմակերպման մեջ հիմնական ուղղումը վերաբերում է ինքնապատրաստությանը, պետք չէ ամենևին վերացնել ինքնապատրաստության անցկացումն անգրագետների հետ: Ինքնապատրաստությունը նրանց հետ պետք է անցկացնել՝ նրանց համար բարձրաձայն կարգալուծ դասագրքից (թերթից): Բայց, բնականաբար, ընթերցանության նյութը նրանց համար պետք է հասցնել նվազագույն չափի: Պետք է տալ ամենապարզ և ամենամատչելի նյութ և, իհարկե, առանց գրանցումների:

Մեծ թվով կիսագրագետ ուսանող խմբակներում պարապմունքների մեթոդների ու կարգի հարցը նույնպես պետք է վորոշել, կոնկրետ հաշվի առնելով այդ խմբակների առանձնահատկությունները: Ինչպես և անգրագետ կարմիր բանակայինների ժամանակ, հիմնական ուղղումները պետք է անել միայն ինքնապատրաստության կազմակերպման տեսակետից: Յեթե կարմիր բա-

նակայինները, թեկուզ հենց վատ, կարողանում են կարդալ ու գրել, հարկավոր է ինքնապատրաստություն կիրառել, բայց ինքնապատրաստության առաջադրությունները նույնպես պետք է ըստ հնարավորին ավելի պարզ լինեն, մշակման լենթակա նյութի քանակը պետք է կրճատել առավելագույն չափով: Գրանցումների ձևերից կարելի լի գործադրել. 1) կարճ ցիտատների ժրտագրություն, 2) հիմնական թվերի ժրտագրություն, 3) լենթաթեմայի վերաբերյալ համառոտ հիմնական լեզրակացություն գրանցումը թելադրությամբ և ալլն: Կիսագրագետ կարմիր բանակայինի ընդհանուր գրագիտություն ամսան հետ միասին՝ առաջադրությունները կարելի լի աստիճանաբար բարդացնել: Կիսագրագետների հետ տարվող աշխատանքի տեսակետից խմբակավարի հիմնական պարտականություններն են և սերտ կապ հաստատել ալն ուսուցչի հետ, վորը կիսագրագետների հետ պարապում է հանրակրթական առարկաներից, տալ այդ ուսուցչին կոնկրետ ցուցումներ ալն մասին, թե ինչպես ոգնել կարմիր բանակայինին՝ կատարելու ինքնապատրաստության առաջադրությունը:

ԱՊԱՀՈՎՈՒՄ Ի ԱՐԴՅՈՔ ՆՈՐ ՄԵԹՈԴԸ ՔԱՂԱՎ-
ՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍՏԻՐԱԿԶԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿԸ

Քաղաքապետներին նոր մեթոդիկայի հարցի ըննարկման ընթացքում յերեւմտ, այն կարծիքն ելին հայտնում, վոր նոր մեթոդը չի ապահովում քաղաքապետներին միջոցով կարմիր բանակայինի դաստիարակության բարձր վորակը: Այդպիսի կարծիքի կողմակիցները պնդում ելին, թե «կենդանի զրուցն» ապահովում ե քաղաքապետներում կարմիր բանակայինի ակտիվության լայն ծավալումը, իսկ նոր մեթոդը կարող ե ոգնել կարմիր բանակայիններին ստանալու ձևական գիտելիքների վորոշ միջինում, սակայն նա չի աջակցի կարմիր բանակայինների ակտիվության զարգացմանն ու կազմակերպմանը, կարող ե մինչև իսկ հանգել անգիր անելուն:

Նման կարծիքը հիմնովին սխալ ե: Ովքեր այդպես են կարծում, չեն հասկանում առնվազն յերեք հանգամանք:

Նախ՝ նրանք չեն հասկանում, վոր քաղաքապետներին դաստիարակչական դերի հարցը հիմնականում լուծվում ե վոչ թե մեթոդիկայով, այլ ամենից առաջ քաղաքապետներին բովանդակությամբ: Անգրագետ, սակավ բովանդակալից քաղաքապետները վոչ մի կերպ չի ապահովում

կարմիր բանակայինի դաստիարակութունը, ինչ մեթոդով ել այդ քաղաքապետները տանելիս լինեն:

Յերկրորդ՝ նրանք չեն հասկանում, վոր կարմիր բանակայինի փաստացի գիտելիքներ ստանալը չի կարող հակադրվել կարմիր բանակայինների դաստիարակությանը: Նրանք վերականգնում են վաղուց դատապարտված, վաղուց մերժված այն «թեորիան», վոր դաստիարակութունը հակադրում ե ուսուցմանը: Իհարկ ե՝ կարմիր բանակայինների կողմից ձևական գիտելիքների վորոշ միջինում յուրացնելը դեռ վոչ մի կերպ չի լուծում նրանց քաղաքական դաստիարակության խընդիրը: Բայց միևնույն ժամանակ քաղաքականապես դաստիարակել կարմիր բանակայինին կարելի լե վոչ թե ընդհանուր խոսակցությունների հիման վրա, վոչ թե վերացական դոգմաների հիման վրա, այլ սխտեմաբար ընդարձակելով նրանց քաղաքական աշխարհայացքը, որը-որին ծանոթացնելով կարմիր բանակայինին մարքս-լենինյան թեորիայի կարևորագույն դրությունների հետ՝ սոցիալիստական շինարարության, դասակարգային պայքարի ու հեղափոխական շարժման կոնկրետ նյութի հիման վրա: Քաղաքապետներին նոր մեթոդիկան թույլ ե տալիս այդ անելու ավելի արագ և ավելի լավ, քան

«կենդանի զրուցը»։ Ճիշտ մոտեցման գեպը ում, քաղաքաբանականների նոր մեթոդիկան ափելի լավ է ապահովում կարմիր բանակալիների ուսուցումն ու դաստիարակութունը, քան թե այդ կարող եր անել «կենդանի զրուցը»։

Յերրորդ՝ նրանք սխալ են հասկանում քաղաքաբանականների ելութունն ու պրակտիկան։ Նրանք կարծում են, վոր նոր մեթոդիկան հանդուս է խմբակավարի «դասախոսութուններին» ու կարմիր բանակալիների կողմից այդ դասախոսութունների հիմնական թեզիսների անգիր տանելուն։ Նրանք կարծում են, վոր նոր մեթոդիկան չի ապահովում կարմիր բանակալիների ակտիվության ծավալումը։

Այն բոլորից հետո, ինչ ասված է վերեվում, պարզ է, վոր քաղաքաբանականների նոր մեթոդիկան ընդհանուր վեջին չունի այդ մեթոդիկայի նման պատկերացման հետ, վոր նա ափելի լայնարձակ ու բազմապիսի հնարավորութուններ է բացում կարմիր բանակալիների ակտիվության զարգացման համար, քան թե «կենդանի զրուցը»։

Իհարկե՝ չի բացասվում առանձին խմբակավարների կողմից նոր մեթոդիկայով քաղաքաբանականների անցկացման ժամանակ անգիր անել տալուն, սերտելուն խրախուսելու վտանգը։ Բայց

այդպիսի վտանգի դեմ պետք է վճռականապես պայքարել և վոչ թե թագնվել նրանից։ Նոր մեթոդիկայով քաղաքաբանականների գործնական անցկացման ժամանակ հնարավոր բոլոր խեղաթյուրումները հաջողութամբ հաղթահարելու համար հարկավոր է՝ ուշադրութամբ ըմբռնել նրա ելութունը, հասկանալ, թե ինչն է նրա մեջ գլխավորը և ուշադրութամբ փորձ կուտակել, թողնելով բոլոր լավագույնը, իրեն արդարացրածը և վճռականապես յետ մղելով ան ամենը, ինչ ափելորդ է, ինչ խանգարում է քաղաքաբանականների իդեական ու մեթոդական մակարդակին, նրանց քաղաքական-դաստիարակչական դերին։

Վերջում հարկավոր է ամենայն խստութամբ շեշտել, վոր խմբակավարներն ամենայն՝ հետևողականութամբ ու համառութամբ պետք է հետևեն այն կանոնին, թե «չպետք է անցնել հաջորդ թեմայի (յենթաթեմայի, հարցի) ուսումնասիրությանը, քանի դեռ յուրացված չե նախորդը»։

Նոր մեթոդիկան ապահովում է յուրացման անընդհատ և անմիջական կոնտրոլը հենց քաղաքաբանականների ընթացքում, և նոր մեթոդիկայի այդ առավելութունը հարկավոր է ամեն կերպ ոգտագործել՝ պայքարելու կարմիր բանակալին-

ների կողմից քաղաքապետներին բարձր լուրացման համար:

Իհարկ է, սխալ է հակադրել լուրացման վերաբերյալ մշակման համար հատկացված ժամանակի հետ: Սխալ է կարծել, թե կարելի չէ ամեն տեսակ ժամանակ հատկացնել մշակման համար միայն թե կարմիր բանակայինը լուրացնի թեման:

Այս կամ այն թեմայի չափից դուրս ձգձգումը ցույց կտա միայն, վոր չափազանց ցածր է քաղաքապետներին վերաբերյալ, նրանց արդյունավետությունը:

Բայց միևնույն ժամանակ հարկավոր է վճարահատներին պարտադրել մեր պրոպագանդիստական աշխատանքում կապիտալիզմի ու ֆորմալիզմի դեմ, աշխատանքի լուրացման ջրառ ու նրա արդյունքը գնահատել և ստուգել հենց իր կարմիր բանակայինի վրա, նրա քաղաքական պատրաստակամությունը ու գիտակցությունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վորն է նոր մեթոդի ելակետը	3
Ինչպես կառուցել պարապմունքները նոր մեթոդով	9
Ինչպես բացատրել	17
Ինչպես տալ առաջադրություններ	36
Ինչպես վարել կրկնողական-ստուգիչ զրույցը	44
Ինչ, չե՞րք և ինչպես գրել առանձին	55
Պետքակա՞ն է արդյոք նոր մեթոդն անգրագետ ու կիսագրագետ կարմիր բանակայինների հետ պարապելու համար	66
Ապահովո՞ւմ է արդյոք նոր մեթոդը քաղաքապետների դաստիարակչական բարձր վարակը	70

ՀՀ Ազգային գրադարան



NL0191609

1960 40 4

159



В. Берлин

© **НОВОЙ методике политзанятий**

Госиздат ССРА, Эриивнь 1933 г.